

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆ ԱՐԵՎ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԸ



Երիտասարդության եւ մարմնակրթության նախարար Սեպուհ Յովնանեան երէկ իր գրասենեակին մէջ ընդունեց Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեւ Յովհաննիսեանը, որուն կ'ընկերակցէր Համահայկական հաղորդում փոխ նախագահ Աշոտ Մելիք Շահնայարեան:

Յովհաննիսեան եւ Շահնայարեան շնորհակալութիւն յայտնեցին Յովնանեանի՝ հաղորդում իր ցուցաբերած վարակցութեան համար եւ նախարար Յովնանեանը պարգևատրեցին Համահայկական հաղորդում ուկէ մետալով: Անոնք շեշտեցին, թէ կ'աշխատին մարմնակրթության մարզին մէջ Պէյրութ - Երեւան երկկողմանի յարաբերութիւններուն ամրապնդման ի խնդիր:

ՊԸՐՐԻ ԻՐ ԱՅՅԵԼՈՒՆԵՐՈՒՆ ՀԵՏ ԲՆԱՐԿԵՑ ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորի երէկ յաջորդաբար ընդունեց արտաքին գործոց եւ արտերկրի իրաւանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտը, կենսոլորտի նախարար Զարէս Պուէյլը, խորհրդարանի փոխ նախագահ Էլի Տրըպլին եւ նախկին նախարար Տուատ Պուրթոսը, որոնք հետ քննարկեց տեղական եւ շրջանային իրադարձութիւնները:

Պրորիի այցելեց նաեւ Լիբանանի մէջ Եմէնի դեսպան Ահմէտ Ապտալա Պաշա, որ հրաժեշտ տուաւ Պրորիի, յայտնելով, թէ Լիբանանի մէջ իր առաքելութիւնը հասած է իր ամառին:

Պրորիի այցելուներէն էին նաեւ ՖՕՕի տնօրէն Ապտէլ Մալամ Ուալատ Ահմէտ եւ Կեդրոնական Գրաստան փոխ կառավարիչ Ահմէտ Ժաշի:

Միւս կողմէ, «Ամալ» շարժումը երէկ հրապարակեց պաշտօնական հաղորդագրութիւն մը, որուն մէջ յիշեց, որ շարժումի նախագահ Պրորի շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր այն նախարարներուն, երեսփոխաններուն, պետական, մշակութային, տնտեսական, կրթական եւ կուսակցական բարձրաստիճան անձնաւորութիւններուն, որոնք ներկայ գտնուեցան Իմամ Մուսա Սատրիի առեւանգման յիշատակի ձեռնարկին, որ տեղի ունեցաւ անցեալ շաբաթավերջին, Պաալպէքի մէջ:

ՄԱՀԱԶԴ

- Տիար Խաչատուր Մարկոսեան եւ զաւակները՝ Վարանդ եւ Ռուպինա
- Գերշ. Տ. Զարեհ Արք. Ազնաւորեան
- Տիկին Անթառամ Ազնաւորեան
- Տէր եւ տիկին Յակոբ Ազնաւորեան
- Տէր եւ տիկին Արա Թոգաթլեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Ժազ Վարպետեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Մարտիրոս Բախտիլեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Նշան Ազնաւորեան եւ զաւակունք
- Տիար Մինաս Տէր Խաչատուրեան եւ զաւակունք
- Տիկին Արտեմիս Մարկոսեան
- Տէր եւ տիկին Վազգէն Մարկոսեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Վաչէ Մարկոսեան եւ զաւակունք
- եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, դստեր, քրոջ, մօրաքրոջ, հարսին եւ հարազատին՝

ՎԱՐԴՈՒՇԻ ՄԱՐԿՈՍԵԱՆԻ (Ծնեալ՝ 1957ին)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 2 Սեպտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Պաալպէքի հիւանդանոցին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Զորքշաբթի, 3 Սեպտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Նոր Միսի Ս. Մարգրիտ եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը՝ ՔԱՀԼԻ Ետեւի փողոցը, Հինգշաբթի 4, Ուրբաթ 5 եւ Շաբաթ 6 Սեպտեմբերին:
- Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել Ազգ. Եղիշէ Մանուկեան Երկրորդ վարժարանի սաներու ֆոնտին:

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐԸ ԱՅՍՕՐ ԿՐ ԲՆՆԱՐԿՈՒԻՆ ԱՏՏՈՒՄԻ ԿՈՂՄԵ

Ելեմտական հարցերու ընդհանուր դատախաչ Խալիլ Ռահալ երէկ ելեկտրականութեան ընկերութենէն ստացաւ այն թղթածրարները եւ փաստաթուղթերը, զորս նախապէս պահանջած էր ելեկտրականութեան ընդհանուր տնօրէն Քամալ Հալիքէն: Նշեալ փաստաթուղթերը կ'առնչուին ելեկտրականութեան ընկերութեան հաշուապահութեան, ինչպէս նաեւ պետական պաշտօնեաներու գործունէութեան հսկող մարմնի տեղեկագիրներուն եւ ընկերութեան տնօրէնութեան կողմէ տրուած վանապան որոշումներուն:

Ռահալ ստուգելէ ետք վանոնք՝ տեղեկագիրով մը պիտի փոխանցէ ընդհանուր դատախաչ Ատնան Ատտումի:

Ատտում իր գրասենեակին մէջ այսօր պիտի քննարկէ այդ տեղեկագիրները, որմէ ետք պիտի տայ մամուլի ասուլիս մը:

Միւս կողմէ, երէկ դատական իշխանութեանց գերագոյն խորհուրդը գումարեց ժողով մը՝ գլխաւորութեամբ խորհուրդի նախագահ դատախաչ Թանիոս Խուրիի: Ժողովին ընթացքին քննարկումի առարկայ դարձան դատական իշխանութիւնները յուլող հարցեր, ինչպէս նաեւ ելեկտրականութեան թղթածրարին առնչուող խնդիրներ:

Այլ գետնի վրայ, դատախաչ Թոնի Լաթթոֆ երէկ շարունակեց իր հետաքննութիւնները երկրագործութեան մարզին ներս լիբանանեամերիկեան երկկողմանի գործակցութեան արձանագրած սխալներուն շուրջ:

Լաթթոֆ լսեց 12 անձերու բացատրութիւնները եւ որոշեց բանտարկել երկրագործութեան նախարարութեան 4 պաշտօնեաները, պետական հաստատութեանց գումարները մսխելու յանցանքով:

Լաթթոֆ լսեց նաեւ երկրագործութեան նախկին նախարար Ալի Ապտալայի բացատրութիւնը:

ԸՍՏ ԸՊՊԱՆԻԻ

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԱՆԲԱՒԱՐԱՐ ԵՆ

Հանրագուտ շինութեանց, փոխադրութեան հարցերու եւ ուժանիւթի ու ջուրի հարցերու երեսփոխանական յանձնախումբը, երէկ, նախագահութեամբ երեսփոխան Մոհամէտ Քապանիի, խորհրդարանին մէջ գումարեց նիստ մը, որուն ներկայ գտնուեցան ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Այուպ Հըմայէտ, ելեկտրականութեան ընկերութեան ընդհանուր

տնօրէն Քամալ Հալիք, ելեկտրականութեան ընկերութեան վարչական գործադիր խորհուրդի անդամներ, բարգաւաճման եւ վերաշինութեան խորհուրդի նախագահ Ժամալ Ալթանի եւ մեծ թիւով երեսփոխաններ:

Հ ա ն դ ի պ ու մ ի ն քննարկումի հիմնական առարկան դարձաւ ելեկտրականութեան տագնապը, որուն շուրջ Քապանի շեշտեց, թէ ելեկտր-

ականութեան հոսանքի խախտումները կասեցնելու արշաւը, որուն կը վորակցէին ապահովական միջոցառումները, անբարար են:

Աս անկուց, որ կը պահանջուի յատուկ ժամացոյցներ վետեղել՝ չափելու համար իւրաքանչիւր շրջանի կամ գիւղաքաղաքի մէջ սպառուող ելեկտրականութեան հոսանքի քանակը:

ՏԱՃԱՏ ԱՅՆԹԱՊԼԵԱՆ
ընդ
ՎԻՊԻ
ԳԱՐԱԳԱՃԵԱՆ

Ամուսնացեալը

30 Օգոստոս 2003
ԱՅՆՃԱՐ

ԲԱՆՏԱԲՈՐՈՒՄԸ

Տեր եւ տիկին տոքթ. Յակոբ եւ Սոնիկ Նազարեան

բախտաւորուած են երկրորդ մանչ զաւակով մը՝

ՍԵՐՈՒԺ

Երեքշաբթի, 2 Սեպտեմբեր 2003

ՍՏԱՑԱՆԸ

• «ԱՆՈՒՆԸ ԼԵՉՈՒԻՍ ՏԱԿ»

Եղիմակ՝ **ԳՐԻԳՈՐ ՊԸԼՏԵԱՆ**

ՍԱՏԵՆԱԶԱՐ «ԵՐԿ»
Փարիզ, 2003

ՅՈՒՇԱՏԵՏՐ - 49

• «ՀԱՉԱՐ ՏԱՐԻ ՆԱՐԵԿԱՅԻԻ ՀԵՏ»

Եղիմակ՝ **Ռ. ՀԱՏՏԵՃԵԱՆ**

Պոլիս, 2003

• «ՅԱԻԵՐԺ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԼՈՒԼՈՒՆ»

Եղիմակ՝ **ԱՐԱ ՅԵՐՄԱՆԵԱՆ**

Խմբագիր՝ **ԵՐՈՒՆԴ ՊՊՊԱՅԵԱՆ**

Լոս Անճելըս, 2002

ՄԱՀԱԶԴ

Արժ. Տ. Հրայր քհնյ. եւ երէցկին Նիկոլեան եւ զաւակունք

Տիկին Արփինէ Թաթուլեան
Օրդ. Յասմիկ Թաթուլեան

Տէր եւ տիկին Գրիգոր Թաթուլեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Միսակ Թաթուլեան եւ զաւակունք

Տիկին Եղիսարէթ Քէջիլբեան եւ զաւակունք

եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց հարազատին՝

ՎԱՐԱՊԵՏ ԹԱԹՈՒԼԵԱՆԻ
(Ծնեալ՝ ԱՏԱՆԱ, 1912ին)

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 23 Օգոստոս 2003ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երկուշաբթի, 25 Օգոստոս 2003ին, Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ մէջ, Մոնթէլայ եւ Հանգուցեալին մարմինը ամփոփուեցաւ Սէն Լորան գերեզմանատան մէջ:

• Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:

• Հանգուցեալին մահուան քառասունամեակի առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 5 Հոկտեմբեր 2003, Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ - Լաւալ, յաւարտ Ս. պատարագի:

ԱԿԵԱՐԿ

Ո՞Ր ՀԱՀԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ Է ԽՕՍՔԸ

Գերմանիոյ վարչապետ Կերհարտ Շրէօտըր երէկ վերանորոգեց իր վորակցութիւնը՝ Եւրոպական Միութեան անդամակցելու թուրքիոյ ճիգերուն: Ան կը խօսէր թուրք իր պաշտօնակիցին՝ Էրտողանի հետ հանդիպումի մը ատարին: Ըստ անոր՝ Թուրքիոյ անդամակցութիւնը կը նպաստէ Եւրոպայի եւ Գերմանիոյ շահերուն, հետեւաբար քննադատեց Գերմանիոյ պահպանողական կուսակցութիւնները, որոնք խստի կը մերժեն Անգարայի անդամակցութիւնը Միութեան:

Շրէօտըրի կեցուածքը նորութիւն չէ. ան նախապէս ալ նմանօրինակ յայտարարութիւններ կատարած է: Արեւմուտքի քաղաքական ակնաւոր մեկնաբաններու համաձայն՝ ան շատ հաւանաբար այս իմաստով յաւազուի խուսանաւումը կը կատարէ, տրուած ըլլալով որ անոր յայտարարութիւնները խօսքէն անդին չեն անցնիր: Մեկնաբանները դիտել կու տան, որ այս ձեւով գերմանացի ղեկավարը «հանդարտ» պահած կ'ըլլայ երկրին մէջ քանակական առումով ոչ անտեսելի թրքական գաղութը:

Այս բոլորը թերեւս կրնան ընդունելի նկատուիլ արեւմտեան քաղաքական արդի տրամաբանութեամբ, սակայն նոյն այդ տրամաբանութեամբ հարիւր տոկոս արդարանալի է նաեւ պահպանողական շարքերուն տեսակէտը, որ խստի կը մերժէ Թուրքիոյ անդամակցութիւնը:

Ինչո՞ւ:

Պարզ է: Պահպանողականները առանց բառերը ծածմելու կը թուեն կենցաղային, կրօնական, ցեղային ու կենսամակարդակի այն հսկայական տարբերութիւնները, որոնք ակնհայտ են Եւրոպայի եւ թուրք ժողովուրդներուն միջեւ: Աւելին: Երկու կողմերուն միջեւ գոյութիւն ունեցող վիճակ վերնախումբի չնչին հաւանականութիւնն իսկ չկայ, տրուած ըլլալով որ թուրքերը մերուելու ոչ մէկ տրամադրութիւն ունին, այլ ընդհակառակն՝ անոնք կը փորձեն պարտադրել իրենց կենցաղն ու բարքերը Եւրոպական Միութիւնը բաղկացրնող բնիկ տարրերուն...

Սիւսապիկ ընկերային վտանգաւոր կացութիւն մը, որմէ վզուշանալու արդար իրաւունքը ունին պահպանողականները, իսկ հարկային արքայն ալ «թեթեւի առնելու» իրաւունք չունին Շրէօտըրները, նոյնիսկ եթէ իսկապէս անոնք քաղաքական խուսանաւում է որ կը կատարեն, նոյնիսկ եթէ ներքնապէս իրենք ալ համակարծիք են պահպանողական տեսակէտին...

Այս բոլորին կողքին եթէ նկատուին անոնք նաեւ պատմական, քաղաքական, ապահովական ու տնտեսական այն բարդ հանգամանքները, որոնցմով կը յատկանշուի Թուրքիան եւ որոնցմով ան խոցելի կը համարուի արեւմտեան արժեքներով եւ չափանիշներով, ապա հայելիի նման յստակ կը դառնայ, թէ Անգարա, որ 17րդ դարէն իսկ (Քարլովիցի դաշնագիր) իբրեւ «հիւանդ մարդ» դուրս շարտուած է Եւրոպայէն՝ Վիեննայի դռներուն հասնելէն ետք, այսօր եւս կը մնայ միեւնոյն անբաղձալի տարրն ու հիւանդը՝ Եւրոպայի ու մանաւանդ Եւրոպական Միութեան համար:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ ԳԵՌՐԳ ՀԱՐՊՈՅԵԱՆ ԵՐԿՐԴ. ՎԱՐԺԱՐԱՆ Ս. ԽԱՉ - ԶԱԼԸԱ
Եր. 04-711565

2003-2004 դպրոցական տարեշրջանի լրացուցիչ արձանագրութիւնները ինքն եւ նոր աշակերտներու համար, կը շարունակուին 9 Սեպտեմբերէն սկսեալ, ամէն օր առաւօտեան ժամը 9:00էն 13:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Վերամուտի թուականներն են.
 • Չորեքշաբթի, 24 Սեպտեմբեր 2003՝ միջնակարգ եւ երկրորդական 7րդ, 8րդ, 9րդ, 10րդ, 11րդ եւ 12րդ:
 • Երկուշաբթի, 29 Սեպտեմբեր 2003՝ նախակրթարան:
 • Երկուշաբթի, 6 Հոկտեմբեր 2003՝ մանկապարտէզ:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՆ

ՄԱՀԱԶԴ

Տիար Կոնստանտին Սարգսեան եւ զաւակները՝ Վարանդ եւ Ռուպինա

Տիկին Արփինէ Թաթուլեան
Օրդ. Յասմիկ Թաթուլեան

Տէր եւ տիկին Գրիգոր Թաթուլեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Միսակ Թաթուլեան եւ զաւակունք

Տիկին Եղիսարէթ Քէջիլբեան եւ զաւակունք

եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց հարազատին՝

ՕՊԵՅՏՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ՄՕՏ

Նախագահ ԿՕՐ Էմիլ Լահուտ երեկ Պասապտայի մէջ ընդունեց արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտը, որուն հետ քննարկեց ներքին եւ արտաքին իրադարձութիւնները, ինչպէս նաեւ պաղեստինեան եւ իրաքեան տագնապներուն վերջին զարգացումները:

Հանդիպումին քննարկուածի առարկայ դարձան նաեւ յառաջիկայ շաբթուան ընթացքին Գահիրէի մէջ կայանալիք Արաբական Լիկայի խորհուրդի հերթական ժողովին պատրաստութիւնները եւ քննարկուելիք օրակարգերը:

Նախագահ Լահուտ ընդունեց մշակուող նախարար Դապի Արիտին, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային զարգացումները:

Արիտի նախագահ Լահուտի փոխանցեց յառաջիկայ շաբթուան ընթացքին Փարիզի մէջ Ֆրանսախօս երկիրներու կազմակերպութեան ժողովին քննարկուելիք մարդկային իրաւանց եւ ժողովրդավարութեան առնչուող հարցերուն շուրջ պատրաստութիւնները:

Նախագահական պալատի հիւրերէն դարձան նաեւ նախկին վարչապետ Ռաշիտ Մուրադի, երեսփոխան Նասէր Քընտիլ, Լիբանանի հաշտապահներու սենտիքայի խորհուրդի անդամներ, հիւանդապահներու սենտիքայի մէկ պատիրակութիւնը, եւ Ժապալ Ամէլի ու Սուրի միւլֆթի Ալի Ամինը:

ԻՎԱՆՈՎԵՆ ՊԱՏԳԱՄ ՕՊԵՅՏԻ

Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտ երեկ ընդունեց Լիբանանի մէջ Ռուսիոյ դեսպան Պորիս Պոլոթինը, որուն հետ քննարկեց Պէյրութ - Մոսկուա երկկողմանի յարաբերութիւնները:

Պոլոթին Օպէյտի փոխանցեց ռուս իր պաշտօնակիցէն՝ Իկոր Իվանովիչն պատգամ մը եւ քննարկեց Օպէյտի Մոսկուա կատարելիք այցելութեան մանրամասնութիւնները, ինչպէս նաեւ տեղական եւ շրջանային իրադարձութիւնները:

Պոլոթին յայտնեց նաեւ, որ 12 Սեպտեմբերին կը նախատեսուի Ռուսիոյ արտաքին գործոց փոխ նախարար Եուրի Ֆետոթովի Լիբանան այցելութիւնը, որ կ'իյնայ Լիբանանի հետ դիւանագիտական խորհրդակցութիւններ կատարելու ծիրէն ներս, ՄԱԿի ընդհանուր ժողովի նախօրեակին:

Հանդիպումէն ետք Պոլոթին նշեց, որ Ռուսիա մտահոգ է Պաղեստինի մէջ արձանագրուող զարգացումներով եւ անցնուց, որ կան բազմաթիւ դժուարութիւններ, որոնք կը խոչընդոտեն խաղաղութեան ճամբու քարտէսը, սակայն Ռուսիա անհրաժեշտ կը նկատէ Միջին Արեւելքի խաղաղութեան ծրագիրին մաս կազմող խաղաղութեան ճամբու քարտէսին գործարարութիւնը եւ այդ գծով ալ կ'աջակտի:

Անդրադառնալով Իրաքի տագնապին, Պոլոթին շեշտեց, որ Ռուսիոյ կարծիքով Իրաքի մէջ ժամանակաւոր կառավարութեան մը նշանակումը մէկ քայլ առաջ կը տանի տագնապին լուծումը, սակայն անհրաժեշտ կը գտնէ այդ կառավարութեան մէջ ՄԱԿի առողջ մասնակցութիւնն ու դերակատարութիւնը տարբեր մարկերու մէջ:

ՕՓԵՔԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՅՑԵԼԵՑ ԿԱՐԶԱՊԵՏ ԸԱՐԻՐԻԻ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երեկ Քորայթի մի մէջ ընդունեց Մոնթրէլի երկիրներու հետ գործակցութեան խորհուրդի ընդհանուր քարտուղար Ապտէլ Ռահման Արիէն եւ ՕՓԵՔԻ նախագահ, Քարարի քարիւղի նախարար Ապտալլա Արիէն, ներկայութեամբ առեւտուրի եւ տնտեսութեան նախարար Մարուան Համատէի, էլեւմուտքի նախարար Ֆուատ Սինիորայի եւ տեղեկատուութեան նախարար Միշէլ Սրմահայի:

Հանդիպումին քննարկուածի առարկայ դարձան Մոնթրէլի երկիրներու հետ գործակցութեան խորհուրդը - Լիբանան երկկողմանի յարաբերութիւնները եւ պաղեստինեան ու իրաքեան տագնապները:

Վարչապետ Հարիրիի այցելեցին նաեւ Կեդրոնական Դրամատան փոխ կառավարիչներ Ալէն Պալեան, Մարուան Նուրի, Ամէլ Ժաշի եւ Մաժիտ Ժամպար:

Վարչապետ Հարիրիի այցելեց նաեւ ներքին ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն ԿՕՐ Մարուան Չէյն: Քննարկուածի առարկայ դարձան երկրին ապահովական կացութիւնը եւ արձանագրուած զարգացումները:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

●ՄՐՏԱՔԻՆ գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու երեսփոխանական յանձնախումբը երեկ գլխաւորութեամբ երեսփոխան Ալի Սալիլի եւ ներկայութեամբ նախարար Ժան Օպէյտի գումարեց ժողով մը, որուն ընթացքին շեշտեց, որ պաղեստինցի ժողովուրդին դէմ իւրայիշեան շարունակուող բռնարարները կը վտանգեն խաղաղութեան ճամբու քարտէսի գործարարութիւնը: Յանձնախումբը շեշտեց, որ Լիբանան կը մերժէ պաղեստինցի գաղթականներու բնակեցումը եւ կը պահանջէ անոնց տունդարձի իրաւունքը:

●ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ Նասրալլա Սֆէյր պատրիարքը երեկ Տիմանի մէջ ընդունեց նախկին երեսփոխան Թամամ Սալամը, որուն հետ քննարկեց ներլիբանանեան զարգացումները: Սալամ յայտնեց, որ լիբանանցի ժողովուրդը կը ցանկալ փոփոխութեան ենթարկել իր կացութիւնը:

Անդրադառնալով Ընդդիմութեան Ազգային ձևատի կազմութեան, Սալամ ըսաւ, որ իրեն ոչ մէկ առաջարկ ներկայացած է միանալու նշեալ ձևատին:

●ՇԻՒՆԵՐՈՒ գերագոյն խորհուրդի փոխ նախագահ միւլթի Չէյն Ապտէլ Էմիր Քապալան երեկ ընդունեց Լիբանանի իրանեան դեսպանատան աւագ խորհրդատու Հիւսէյն Սալաուաթի Պորը, որ ցաւակցութիւն յայտնեց Իրաքի կրօնապետ ալաքարալ Մոհամէտ Պաքէր Հաքիմի սպանութեան առթիւ: Պոր ըսաւ, որ ոճիրը գործող անձերը հեռու են մարդկային արժանիքներէ:

●ԼԸՉՊԱԼԼԱՅԻ հոգեւոր պետ Մոհամէտ Հիւսէյն Ֆատալլա երեկ հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի հետ, որ իր եւ Ամալ շարժումի անունով ցաւակցութիւն յայտնեց Իրաքի կրօնապետ ալաքարալ Մոհամէտ Պաքէր Հաքիմի սպանութեան առթիւ:

●ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ փոխ նախագահ Էլի Ֆըրպի երեկ ընդունեց Լիբանանի մէջ Չիլիի դեսպան Ֆիլիպի Փերէսի այցելութիւնը: Քննարկուեցան Լիբանան - Չիլի երկկողմանի յարաբերութիւններու բարելաման հեռանկարները: Ապա Փերէս Չիլիի նախագահին անունով պարգեւատրեց Ֆըրպիին՝ Չիլիի ազգային շքանշանով:

●ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ եւ առեւտուրի նախարար Մարուան Համատէ երեկ ընդունեց Լիբանանի մէջ Բրիտանիոյ դեսպան Ռիչըրտ Քինչընի հրաժեշտի այցելութիւնը: Քննարկուածի առարկայ դարձան Եւրոպայի հետ գործակցութեան Լիբանանի կնքած համաձայնագիրի գործադրութիւնը, ինչպէս նաեւ Պէյրութ - Լոնտոն երկկողմանի յարաբերութիւններու բարելամանը յատկապէս տնտեսութեան եւ առեւտուրի մարկերէն ներս:

●ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐՈՒ փոխադրութեան ինքնաշարժներու վարորդներու սենտիքաներու համադաշնակցութիւնը երեկ նախագահութեամբ համադաշնակցութեան նախագահ Պասաբ թլայսի գումարեց ժողով մը, որուն ընթացքին կոչ ուղղեց կառավարութեան՝ պենսիոնի հայրթայրման յատուկ սակ մը ձեռնարկ վարորդներուն եւ արտօնել կանաչ մազութի գործածութիւնը:

●ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ընկերութեան պաշտօնէաներու յատուկ խմբակներ կը շարունակեն էլեկտրականութեան հոսանքի խախտումներուն վերջ տալու արշար, վայելելով լիբանանեան բանակին եւ ներքին ապահովութեան ուժերուն յատուկ զօրակցութիւնը: Երեկուան արշար տեղի ունեցաւ Պընթ ժրպէյլի մէջ, որ սահմանուեցան մէկ միլիոն Լ. ոսկիէն մէկուկէս միլիոն Լ. ոսկիի տուգանքներ:

Arabic header with logos: البيرق, السبق, الزمان, السفير, and the title: **ԻՆՉ ԿԸ ԳԻՆԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐՈՒԹԵՐԸ**

Լիբանանեան օրաթերթերը երեկ յուսարձակի տակ առած են Կապալի մէջ իսրայէլեան յարձակումներուն սատակացումը, Արաքի քարիւղի նախարար Ապտալլա Արիէն եղած տարակարծութիւնները եւ Համասի ղեկավարներէն Խատէր Հասարի ահաբեկումը:

Իրաքեան իրադարձութիւններուն կարգին առժամեայ խորհուրդի անդամներուն անուններուն յայտարարութիւնը եւ «Ժապիրա» կայանէն սփռուած Սատամ Հիւսէյնի խօսքը կը գրաւեն գլխաւոր լուրերը:

Տեղական լուրերու կարգին հիմնական տեղ կը գրաւէ նախատի այցելութիւնը Չիւնարաբական կարգ մը հաստատութիւններ եւ հիւանդանոցներ:

«Տիար» օրաթերթը գրած է, թէ Համասի ղեկավարներէն մէկը ահաբեկուեցաւ իր ինքնաշարժին վրայ արձակուած ռումբին պատճառով:

«Նահաբ» նշած է, որ Համասի ղեկավար մը ահաբեկուեցաւ, իսկ պայքարը սուր թափով կը շարունակուի Արաքի մէջ:

«Սնուար» ի համաձայն պաղեստինեան անկախութեան կառավարութեան անդամներէն մէկը ահաբեկուեցաւ իր ինքնաշարժին վրայ արձակուած ռումբին պատճառով:

«Սնուար» ի համաձայն, Լահուտ անակրկալ կերպով այցելեց Պէյրութի կառավարական հիւանդանոց ու Սալամ փապուրիի եւ հետեւեցաւ տարուած աշխատանքին:

«Տիար» ի համաձայն, Լահուտ անակրկալ կերպով այցելեց Պէյրութի կառավարական հիւանդանոց ու Սալամ փապուրիի եւ հետեւեցաւ տարուած աշխատանքին:

«Սնուար» գրած է, թէ Սիսթանի ամերիկեան ԿՕՐ-ը պատասխանատու կը նկատէ Իրաքի մէջ տիրող անապահով կացութեան: Թերթին համաձայն, Քուէթայի մէջ ռումբերով բռնաւորութեան երկու ինքնաշարժներ յայտնաբերուեցան, իսկ Նաժաֆի մէջ նախկին ղեկավարներէն մէկուն տունը խուլարկուեցաւ:

ԽԱՏԵՐ ԸՍՏԱՆԻ ԱՄԵՐԿԱՌԻՄ ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ՏԱԳՆԱՊ

«Տիար» օրաթերթը գրած է, թէ Համասի ղեկավարներէն մէկը ահաբեկուեցաւ իր ինքնաշարժին վրայ արձակուած ռումբին պատճառով:

«Նահաբ» նշած է, որ Համասի ղեկավար մը ահաբեկուեցաւ, իսկ պայքարը սուր թափով կը շարունակուի Արաքի մէջ:

«Սնուար» ի համաձայն պաղեստինեան անկախութեան կառավարութեան անդամներէն մէկը ահաբեկուեցաւ իր ինքնաշարժին վրայ արձակուած ռումբին պատճառով:

«Նահաբ» նշած է, որ Համասի ղեկավար մը ահաբեկուեցաւ, իսկ պայքարը սուր թափով կը շարունակուի Արաքի մէջ:

«Նահաբ» գրած է, թէ նախագահ Լահուտ իր այցելութիւններէն ետք ուղեւ քննութիւն քանակ կարգ մը հարցերու շուրջ եւ պահանջեց, որ որոշ աշխատանքներ աւելի աշխուժանան ու աւելի արագ ժամանակաիջոցի մէջ ամբողջանան:

«Նահաբ» նշած է, թէ Սատամէն ետք կազմուած առաջին կառավարութիւնը տեղեկատուութեան եւ պաշտպանութեան նախարարութիւններ չունի: Բաժանումը եղած է հետեւեայ ձեւով. քարիւղը՝ Չիլիէն, Ռուսիան, տնտեսութիւնը՝ սիւնիներուն, իսկ արտաքին հարցերը՝ քիւրտներուն, դիտել տուած է օրաթերթը:

«Սնուար» ի համաձայն պաղեստինեան կառավարութիւնը կարգ մը փոփոխութիւններ կը ներմուծէ ուսուցիչներու եւ աշակերտներու փոխարկութեան ընթացքին մէջ, որպէսզի անոնք իսրայէլեան բռնաւորումին պատճառով դժուարութիւններ կարենան շրջանցել:

«Սնուար» ի համաձայն, Հիւսէյնի օրն օրն աւելի կայանայ հանդիպում մը, որպէսզի քննարկուին վարչական հարցերը, իսկ ամերիկեան իշխանութիւնները կառուցած կը մասնաւորապէս պարտաւորուին պարտաւորութեան: Պաղեստինեան խորհրդարանի նախագահը կը յայտարարէ. «Արաքի եւ Ապաա միասին գործելու ամէն հաւանականութիւն կորսնցուցին»:

«Սնուար» ի համաձայն, իրաւունքը իր պաշտօնէն:

«Սաֆիր» գրած է, թէ իշխանութեան պատ-

«Սաֆիր» ի համաձայն, Հիւսէյնի օրն օրն աւելի կայանայ հանդիպում մը, որպէսզի քննարկուին վարչական հարցերը, իսկ ամերիկեան իշխանութիւնները կառուցած կը մասնաւորապէս պարտաւորուին պարտաւորութեան: Պաղեստինեան խորհրդարանի նախագահը կը յայտարարէ. «Արաքի եւ Ապաա միասին գործելու ամէն հաւանականութիւն կորսնցուցին»:

«Սաֆիր» գրած է, թէ իշխանութեան պատ-

«ԱԶԳԱԿ» - ՄՐՑԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄՐՅՈՒՄ

Ստորեւ կը ներկայացնենք «Ազգակ»-ի կազմակերպած ընդհանուր զարգացման մրցումին եօթներորդ հարցարանը:

Այս հարցարանին վ 5 հարցումներուն ձիւղ պատասխանողները միանակաճութեամբ պիտի ընտրուին բախտաւոր մասնակից մը, որ պիտի շահի Պէյրութ - Վառճա - Պէյրութ օդանաւային տոմսակ մը:

Իրաքանցի մասնակից կրնայ խմբագրատուն ուղարկել միեւնոյն ամուսնը կող միայն մէկ կտոր:

Մրցանքին մասնակցելու համար պէտք է օգտագործել «Ազգակ»-ի էջերուն մէջ տեղադրուած կտորներ եւ ոչ՝ լուսապատճեններ:

Հարցարանները պէտք է լեցուին եւ խմբագրատուն ներկայացուին առաւելագոյնը Հինգշաբթի, 4 Սեպտեմբեր 2003, երեկոյեան ժամը 18:00:

- ՀԱՐՑԱՐԱՆ ԹԻՒ 7
- 1. Ի՞նչ է Պիթըրսի երգիչներէն Ճոն Լենընի կնոջ անունը:
- 2. Ո՞րն է Չուիցերիոյ մայրաքաղաքը:
- 3.- Փիթ Սամփրաս կրան շելէմ քանի՞ մրցաշարը շահած է:
- 4.- Ո՞վ է հեղինակը «Գիւղը» եւ «Աճաբեր» գիրքերուն:
- 5.- Ե՞րբ է Անգլիոյ անկախութեան օրը:

ԱՆՈՒՆ ՄԱԿԱՆՈՒՆ..... ԵՆԻԳԵԱՆ ԹՈՒՎԱԿԱՆ..... ՀԵՌԱԶԱՅԻ ԹԻՒ.....

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»ԷՆ ՀԵՏԵՒԵՅԷՔ «ԱՍՏՂԱՀՈՅԼ» ՀՆԱՂՈՐԴԱՇԱՐԻՆ Հինգշաբթի, 4 Սեպտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 5:00ին «Աստղաշար»-ը նուիրուած է մտաւորական, ազգային գործին եւ ուսուցիչ

ԿԱԶԳԵՆ ԷԹԻՄԵՂԵԱՆԻ

Յանձնառու մտաւորականին մասին կը վկայեն «Ազգակ» օրաթերթի նախկին տնօրէն եւ երկար տարիներու պատասխանատու խմբագիր ՍԱՐԳԻՍ ՄԱՀՍԵՐԷՃԵԱՆ

Մտաւորական, ուսուցիչ եւ խմբագիր ԿԱՐՕ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Հաղորդաշարի խմբագիր՝ Ա. ԱՊՏԱԼԵԱՆ

Մի՛ մոռնաք ունկնդրելու «Աստղաշար»-ը

«Տիար» գրած է, թէ Սուրիոյ նախագահ Պաշար Սատ ընդունեց Կիպրոսի արտաքին գործոց նախարարը եւ շեշտեց, թէ միջին արեւելեան հարցին մէջ անհրաժեշտ է ՄԱԿի դերակատարութիւնը եւ ներդրումը:

«Սնուար»-ի համաձայն, Ապտալլա իշխան իր շրջապատին տին պիտի սկսի Ռուսիային:

Թերթը նշած է, թէ Ամասիւն ետք Սուրիա Դամասկոս մեկնեցաւ եւ յայտարարեց, թէ խաղաղութեան ճամբու քարտէսը անփոխարինելի է:

«Մուսաբապալ»-ի համաձայն, ամերիկացի իսլամները Պուշի դէմ կը բռնարկեն 2005ի ընտրութիւններուն:

ԼՈՒՐԵՐ ՆԱՅԱՇԽԱԲՐՆԷՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒՆՈՐ ՇՈՒԿԱՆԵՐՈՒ ՓՆՏՈՏՈՒՔ

Հայաստանի Առևտրաարդիւնաբերական պալատը իր գոյութեան մօտաւորապէս մէկուկէս տարիներուն ընթացքին յարաբերութիւններ հաստատած է շուրջ 30 երկիրներու առևտրաարդիւնաբերական պալատներուն հետ: Սակայն այդ երկիրներու հետ դեռ կան լայն առևտրական յարաբերութիւններ: Տան հետ կը համագործակցին Հայաստանի 400 ձեռնարկութիւնները:

Արտասահմանի մէջ ընկերութիւններ կը հետաքրքրուին հայկական քոնիակով, գինիով, չոր եւ թարմ պտուղներով եւ բանջարեղէնով: Մեծ շուկայ ունի Հայաստանէն արտածուած խեցեգետինը, ձուկի տեսակները, գորտերը:

Սեպտեմբերի առաջին կէսին Հայաստանի նախագահի գլխաւորած պատուիրակութեան հետ Պուլկարի պիտի մեկնի նաեւ Առևտրաարդիւնաբերական Տան նախագահ Մարտին Սարգսեան եւ գործակցութեան պայմանագիր պիտի կնքուի տեղւոյն Առևտրաարդիւնաբերական Տան հետ:

ՅՈՒՆԱԿԱՆ ԿՈՂՄԸ ՊԻՏԻ ՈՐՈՇԷ ՏԱՌՈՒՇԻ ԵՒ ԼՈՌԻ ՍԱՐՁԵՐՈՒՆ ԲՐԱՄԱՂՐՈՒԵԼԻՔ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՉԱՓԸ

29 Օգոստոսին Հայաստանի գիւղատնտեսութեան նախարարութեան մէջ տեղի ունեցած հանդիպման մը ժամանակ Հայաստանի մէջ Յունաստանի դեսպան Անտոնիոս Վլախանոս տեղեկացուց, որ իր երկրի գիւղատնտեսութեան նախարարի կողմէ հաւանութեան արժանացած ծրագիրը՝ Հայաստանին 2,35 միլիոն եւրօ օժանդակութիւն (սերմնացու ցորեն եւ պարարտանիւթ) տրամադրելու մասին, առայժմ մշակման ընթացքի մէջ է:

Իսկ մինչ այդ, արդէն Տաւուշ եւ Լոռի այցելեցին յունական ոչ կառավարական երեք պատւիրակութիւններ՝ ծանօթանալու համար մարզերու գիւղատնտեսական, առողջապահական եւ կրթական հարցերուն եւ պահանջուող օժանդակութեան կազմակերպման կարելիութիւններուն:

Դեսպան Վլախանոս տեղեկացուց նաեւ, որ Յունաստանի մէջ գործող «Արդոնտոս» կազմակերպութիւնը մինչեւ տարեկանը պէտք է ներկայացնէ յստակ առաջարկներ՝ Տաւուշի եւ Լոռիի մարզերու առողջապահական հիմնարկներուն տրամադրելի օժանդակութեան վերաբերեալ:

«ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ» ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՒՍ

Վերածնունդի ժամանակաշրջանի իտալացի մեծագոյն բանաստեղծ Տանթէ Ալիկիէրի «Աստուածային կատակերգութիւն» բանաստեղծութիւնը մեծ ազդեցութիւն ունեցած է ոչ միայն եւրոպական, այլ նաեւ հայ գրականութեան վրայ: Անիկա ունի հայերէն ամբողջական երկու թարգմանութիւն եւ առանձին հատուածներու քանի մը տարբերակներ:

Վերջերս «Աստուածային կատակերգութիւն»ը բանասէր Ռուբէն Ղուչեանի ձեռնարկով ունեցաւ իր երրորդ ամբողջական թարգմանութիւնը: Ռ. Ղուչեան Տանթէի ստեղծագործութիւններով հետաքրքրուած է տակաւին ուսանողական տարիներէն եւ «Աստուածային կատակերգութիւն»ը թարգմանելու համար սորված է

իտալերէն: «Աստուածային կատակերգութեան» թարգմանութեան 28 տարուան տքնալան աշխատանքին ընթացքին, ըստ թարգմանիչին, ինք միշտ մտածած է ընթերցողին մասին, ջանացած է թարգմանել այնպէս, որ «անմահ իտալացիի բանաստեղծութիւնը հայ ընթերցողը ընկալէ իբրեւ հայ գրականութեան փաստը, իբրեւ մայրենի լեզուով գրուած ստեղծագործութիւն»:

Թարգմանութեան երեք հատուածները՝ «Դոմիթ», «Քաւարան» եւ «Դրախտ», պիտի հրատարակուին առանձին - առանձին: Առաջին մասը արդէն ներկայացուած է Հայաստանի Գրողներու Միութեան եւ գալ տարի պիտի հրատարակուի պետական պատուէրի շրջանակներուն մէջ:

Ռուբէն Ղուչեան նաեւ Տանթէի «Նոր կեանք» ստեղծագործութեան հայերէն առաջին թարգմանութեան հեղինակն է, թարգմանած է Լեւոն Բաբայանի «Դեւը» բանաստեղծութիւնը եւ բազմաթիւ ուրիշ ստեղծագործութիւններ: Կը տիրապետէ անգլերէնի, ֆրանսերէնի, իտալերէնի եւ ռուսերէնի:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԱՐՏԱՇԷՍ ԵԱՐԵԱՆԻ «ՍԱՄՆՈՅ ԴԻՅԱԶՈՒՆՔ» ԳԻՐՔԸ

«Արմէնփրէս» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ վերջերս առանձին հատորով լոյս տեսած է բանաստեղծ եւ թարգմանիչ Արտաշէս Եաւրեանի «Սամոյ Դիւցազունք» բանաստեղծական երկը, որ «Սամոյ Մոնք» ժողովրդական դիւցազնավէպի չափածոյ մշակումն է: «Սամուար եւ Բաղդասար», «Առիւծաձեւ Մհեր», «Դաւիթ եւ Խանդուք» եւ «Սամոյ Մհեր» բաժիններէն բաղկացած այս գիրքը հրատարակուած է պետական պատուէրով, «Դրագարկ» ընկերութեան տպարանին մէջ:

Արտաշէս Եաւրեան ծնած է 1932 թուականին, Գանձակի մէջ: Աւարտած է Երեւանի Պետական համալսարանի բանասիրական բաժանմունքը: Եղած է ուսուցիչ, լրագրող եւ զբաղած է գրական-ստեղծագործական աշխատանքով: Անոր գրելի կը պատկանին «Օնիախի ծուխը», «Ինչ կը պատմէ մայրիկը», «Ակուրքներ», «Մամա-նայ», «Գարնան կանչով», «Ժամանակի յորձանցում» եւ բազմաթիւ ուրիշ գիրքեր ու ժողովածուներ:

«Սամուոնցի Դաւիթ»ը մեր ժողովուրդին կտակարանն է: Իբրեւ դիւցազնավէպ՝ ան համաշխարհային գրականութեան բացառիկ յուշարձաններէն մէկն է, շատ ինքնատիպ է իր համամարդկային հնչողութեամբ, կերպարներու ամբողջ պատկերասրահով մը՝ հարուստ գաղափարներով եւ լայն ընդգրկումով, ըսաւ Արտաշէս Եաւրեան:

ՔԱՐԷ ԴԱՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇԸՉԱՆԻ ԳՈՒՆԱՒՈՐ ԺԱՅՈՒՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ

Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի հնագիտութեան եւ ազգագիտութեան հիմնարկը հնագիտական ուսումնասիրութիւններ կը կատարէ Արագածի եւ Արայի լեռներուն միջեւ, լաւաների պատճառով յառաջացած Ապարանեան զոգաւորութեան՝ Ակնագիւղ, Գեղամաւան եւ Քուչակ գիւղերուն տարածքին:

Հնագիտները պարզած են, որ քարէ դարուն Արագածի եւ Արայի լեռներուն միջեւ գոյութիւն ունեցած են քաղցրահամ լիճեր: Քասախի կիրճը մեծ խտութեան բնակուած շրջաններէն մէկը

եղած է յատկապէս քարէ եւ պրոնզէ դարերուն, ինչ որ պայմանաւորած է հումքի ազդեցութեամբ առկայութեամբ եւ քաղցրահամ ջրերու շնորհիւ կենդանիներու առատութեամբ:

Արշաւախումարը Քասախ գետի ակունքէն մինչեւ Սաղմոսաւան գիւղը ինկած տարածքը յայտնաբերած է մեծաքանակ յուշարձաններ՝ փայլուն ժամանակաշրջանի հնավայրեր, քարայր - կացարաններ, ամրոցներ, դամբարանադաշտեր: Գտնուած է գունաւոր պատկերներով քարայր մը եւ պրոնզէ դարու ամրոցներու ամբողջ համալիր մը:

ՋՈՒԹԱԿԱԿԱՐ ՄԻՔԱՅԵԼ ՍԻՍՈՒՆԵԱՆ ԵԼՈՅԹ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ ՌԻՍԹՈՐԻ ՄԷՉ

Յառաջիկայ 30 Սեպտեմբերին ջուլիակահար Միքայէլ Սիսոնեան ելույթ պիտի ունենայ Ուսթիլի մէջ, Քրիտիկի նուագախումբին հետ:

Ան պիտի նուագէ Լալոյի ծանօթ «Սպանական համանուագ»ը: Նուագախումբին ղեկավարն է Վալերի ձերճեւ:

17 տարեկան Սիսոնեան, որ այժմ կը բնակի Միքայէլ Նահանգներու մէջ, 2002ին Նիւ Եորքի «Ալիս Թուլի Հոյ»ին մէջ մեծ յիշատակութեամբ նուագած էր Արամ խաչատրեանի ջուլիակի քոնչերթին:

Նչեք, թէ ան 12 տարեկանին արդէն իսկ մեծ հմտութեամբ կը տիրապետէր ջուլիակին: Սիսոնեան իր խումբին հետ նաեւ պիտի նուագէ գերմանացի յորինող Վակնէրէն կտորներ:

ՏԻԳՐԱՆ ԹՈՒՔԱՆԵԱՆԻ ՅՈՐԵԼԵՆԱԿԱՆ ՅՈՒՅԱԿԱՆԱԳԵՍԸ

Հայկական կերպարուեստի աւագ սերունդը ներկայացնող Տիգրան Թոքանեան, որ այս տարի կը թեւակոխէ իր 80 տարեկը, արուեստասէրներուն ներկայացած է իր անհատական յորելենական ցուցահանդէսով, որուն բացումը կատարուած է 29 Օգոստոսին, Հայաստանի Նկարիչի Տան մէջ:

Հայաստանի վաստակաւոր գեղանկարիչը ցուցադրած էր վերջին աւելի քան 30 տարուան ընթացքին իր կատարած աշխատանքին ընտրանին, որ կը ներկայացնէ Հայաստան աշխարհն ու անոր պատմութիւնը՝ Մեսրոպ Մաշտոցէն ու Սահակ Պարթեւէն մինչեւ մեր երկրին մէջ սփռուած վանքերը, եկեղեցիները, խաչքարերը, գորս նկարները համար հեղինակը շրջած է ամբողջ Հայաստանը:

ՄԱՐԳԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՅ ԳՊՐՈՅԻ ԻՆՆԵՐՈՐԳ ԴԱՍԸՆԹԱՅԸ Կ'ԱՒԱՐՏԻ

Վանաձորի քաղաքամերձ «Միծեռնակ» ճամբարին մէջ 28 Օգոստոսին տեղի ունեցաւ Հայկական Սահմանադրական Իրաւապաշտպան կեդրոնի Մարդկային Իրաւանց զպրոցի իններորդ դասընթացքին փակման արարողութիւնը, որուն ներկայ գտնուեցան պետական, տեղական ինքնակառավարման, ինչպէս նաեւ միջազգային եւ տեղական կազմակերպութիւններու, գանգրուածային լրատուամիջոցներու ներկայացուցիչներ:

Դասընթացքը կազմակերպուած էր համագործակցային ուսուցման եղանակով: Անոր իրենց մասնակցութիւնը բերին հանրակրթական

զպրոցներու «Իրաւունք» առարկան դասաւանդող 75 ուսուցիչներ՝ Հայաստանի բոլոր մարզերէն:

Դասընթացքի աւարտին բոլոր մասնակցողներուն հետ կնքուեցաւ հեռակայ ուսուցման վերաբերող համաձայնագիր մը, որ կը նախատեսէ հաւաքներ, փոխադարձ այցելութիւններ, դասաւանդակի լսումներ, վերջաւորութեան՝ աւարտական քննութիւն:

Քսանօրեայ դասընթացքին ընթացքին մասնակիցներուն կարելիութիւն տրուած էր օգտուելու Վանաձորի մէջ գործող մարդկային իրաւանց գրադարանի ծառայութիւններէ:

«ՇԷՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՇՈՒՇԻՒ ՄԷՉ ՄՇԱԿՈՅԹԻ ԿԵԳՐՈՒՄ ԸՆԷՔ ՌԻՆԵՅԱԿ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կառավարութեան հերթական նիստին ընթացքին հաւանութեան արժանացաւ Ֆրանսայի «Շէն» հասարակական կազմակերպութեան առաջարկը՝ Շուշիի մէջ մշակութային կեդրոնի շէնք ունենալու կապակցութեամբ:

Արցախի կառավարութիւնը որոշեց 135 բաւարարող մեթր ընդհանուր մակերեսով Փոքր մզկիթի կիսաւեր շէնքը մնայուն օգտագործման իրաւունքով անհատոց յանձնել «Շէն»ին՝ զայն վերանորոգելու եւ իբրեւ մշակոյթի կեդրոն գործածելու համար:

ՊՈԼԻՍ

«ՀԱՉԱՐ ՏԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՒ ՀԵՏ»



Կ. Պոլսոյ մէջ լոյս տեսած է «Մարմարա» թերթի գլխաւոր խմբագիր Ռոպէր Հատտէճեանի «Հազար տարի Գրիգոր Նարեկացիի հետ» գիրքը, որ գլխաւորաբար կը բովանդակէ նոյն խորագրի տակ վերջերս թերթին մէջ հրատարակուած անոր 20 յօդուածները:

Ըստ «Մարմարա»ի, Ռոպէր Հատտէճեանի գիրքը լոյս տեսած է «Մատեան ողբերգութեան» ստեղծագործութեան 1000ամեակին առիթով, որ հանդիսաւորապէս պիտի նշուի Հայաստանի մէջ եւ անոր սահմաններէն դուրս:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ստորագրելու 17Գ 31 Օգոստոս մասնակցեցաւ «Աշտեան Թուրք» հաստատութեան կազմակերպած Երեւան, Սեւան եւ Ծաղկաձոր շրջապտոյտին: Ծրագրատրոյտի յայտարարող ամբողջութեամբ գործադրուեցաւ, ինչպէս նաեւ յաւելեալ իրենց օրեր ամբողջ խումբը դարձաւ հաստատութեան սեփականատէր Յովսէփ Աշտեանի ճաշի հիւրը, իսկ գիշեր մըն ալ նուազախումբի եւ համրածամօթ երգիչի մը մասնակցութեամբ խրախմսուց ունեցանք: Նաեւ մշտնջորդ շրջապտոյտը կազմակերպողին ընթրիքի հիւրերը եղանք:

Երկու շաբթուան տեւողութեան «Աշտեան Թուրք»ի սեփականատէր Յովսէփ Աշտեանի հոգատարութեան եւ հսկողութեան տակ ոչ մէկ դժուարութեան հանդիպեցանք: Այս առիթով մեր ջերմ շնորհակալութիւնը կը յայտնենք Յովսէփ Աշտեանին:

Յարգանքներով՝
Տեր եւ տիկին Արտաշէս Ասատուրեան, տեր եւ տիկին Սոֆիա Կոթլեզոգեան, տեր եւ տիկին Գրիգոր Խաչատուրեան, Արշալոյս Միքայէլեան, Մարգրիտ Սուսանի, Անդրանիկ Պապիկեան, Մարի Կոստանեան, Մարի Գազեգեան, Էլտոնա - Սիլվա Պոնոպարեան, Տիգրանուհի Բարսեղեան, տեր եւ տիկին Սարգիս Թովումյան, Սիւթանիկ Սուրանեան, տեր եւ տիկին Յովսէփ Գաբրիէլեան, տեր եւ տիկին Վահան Մարտիրոսեան, Սօսի Գուլեան, Զարոյին Սարսուպեան, Ռազմիկ Յակոբեան:

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

• Ճամբորդութեան պատճառով, Սգիերի սկիզբը, նորակառոյց. 160 քառ. մետր, 3 մնջաւեցանակ, հիւրասրահ, ճաշատան, 3 բաղնիք, կեդրոնական էր բոնտիսիոն, քրիտ, ժժէրաթ, կառատու: Գեղատեսիլ դիրք: Դիմել՝ հեռ. 01 - 267909:

Orientplus
KHMARAZ TRAVEL & TOURISM
Touch New World

Jarna
\$319

8 days - Direct Charter Flight
Every Tuesday starting from 8 July

Other Destinations
Boat Trip to
Cyprus 3 Days \$190
Cyprus & Greece \$425

BOOK THIS WEEK AND GET 15% DISCOUNT
ASK FOR OUR FREE CREDIT FACILITIES

01.900598, 901598
03.258336, 256254
www.orientplus.com

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՇՐՋԱՊՏՈՅՑ ԴԵՊՐ ԵՐԵՒԱՆ - ԾԱՂԱԶՈՐ - ՍԵՒԱՆ

15 - 22 եւ 15 - 29 Սեպտեմբեր: Լճան պտոյտներով, գիւմ մէկ շաբաթ փոխան 650 \$ միայն 450 \$, իսկ փոխան 850 \$ միայն 599 \$, իսկ երկու շաբաթ փոխան 950 \$ միայն 750 \$ եւ փոխան 1250 \$ միայն 999 \$:
Արձանագրութիւն Աշտեան Թուրք
Հեռ. 01-261177, 01-240654 եւ 03-233978

ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՅԱՆԱԳԵՍ

Ըովանաւորութեամբ՝
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ
(Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Նախագահութեամբ՝
ԻՍՐԱՅԵԼ ԵՒ ԱԼԵԿ ՏՈՒՄԱՆԵԱՆՆԵՐՈՒ
Կազմակերպութեամբ՝
Ս. ՊՈՂՈՍ ԵԿԵՂԵՅՏԻՈՅ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ
ԵՒ ԱԶԳ. ՅԱՆԱՅ - Գ. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ
ՔՈՒԼԵԹ ԽՆԱՍՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Մասնակցութեամբ՝
Հալեպիայի երգիչ՝ ԳՕԳՕ ԱՍԱՅԵԱՆԻ
ԵՒ «ՍՊԻՏԱԿ» նուագախումբին

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 6 Սեպտեմբեր 2003ին, Երեկոյեան ժամը 9:00էն սկսեալ, «Զազիմօ Այն Այնձար» ձաշարանին մէջ: Ցոմսերը ստանալ Ըամազգայիցի գրախմուքին (Պուրճ Ըամուտ) եւ «Փանոս Լորէնց» հաստատութենէ:

ԾԱԽՈՒ ԸՈՂԱՇԵՐՏ

• Այնձար, գիւղից մէջ, 4000 քառ. մետր տարածութեամբ, քրիտով, կոյուղիով եւ թրիֆազէ ելեկտրականութեամբ: Դիմել՝ հեռ. 03 - 207772:

Կ'ՈՒԶՈՒՄ

Balkan Holidays
TRANSLITEX TOURS
ԳԵՊԻ ՎԱՌԵԱ ՇՐՋԱՊՏՈՅՑՆԵՐՈՒ
36 ՏԱՐԻԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ

Varia Summer

2458 սկսեալ

Balkan Holidays

ԱՆԱՌԱԿ ՏՂԱՅ ՄԸ

Մարդու երեւակայութիւնը անառակ ու շփացած տղու մը կը նմանի: Անկարգապահ է, կարգ ու կանոն չի ճանչնար, կ'ընթանայ այնպէս ինչպէս խելքին կը փչի, կ'ուզէ ձեռք անցրնել ամէնէն արդիւրեւածն ու անպատշաճը: Քիչ մը անամօթ է: Նաեւ անզգամ: Բաւական ալ անխոհեմ, Անընթացահասակ է:

Այսպէս մտածեցի անցեալ օրը: Նստած էի համակարգիչի առջեւ եւ կը գրէի նիւթի մը մասին, որ զիս շատ խանդավառած էր: Բայց արդէն բաւական գրած էի, երբ յանկարծ կանգ առի: Մասնորոշ իրենց թուիչքը դադարեցուցին համակարգիչի ստեղծարարին վրայ: Հիմա չէի գրեր այլեւս ու կը մտածէի: Տարբերակ թուիչք մը առած էին մտածումներս ու երեւակայութիւնս: Աստուած իմ, երեւակայութիւնս ինչ անտարբեր ու հրաշալի նիւթերու շուրջ կը դառնար, կը դարպասէր այդ նիւթերուն, աչք կը քթթէր անոնց, յետոյ ինծի կը դառնար ու կարծես կ'ուզէր որ ալ հետեւէի իրեն: Ես կը հիանայի, բայց միտածամանակ կը մերժէի: Կը մերժէի, որովհետեւ գիտէի որ երբեք պիտի չկատարեայի գրել այն նիւթերուն մասին, որոնք շուրջ կը պտտուէր իմ խելքի երեւակայութիւնս: Ինչնթ իսկապէս: Ի՞նչպէս ան կրցած էր ընել այսպիսի ոստում մը, ի՞նչպէս կրցած էր բանալ հրաշալի ու անտեսանելի աշխարհի մը խորհուրդները, ի՞նչպէս ան կրցած էր աչքերուս առջեւ ստեղծել գունաւոր այնպիսի անիրական աշխարհ մը, որուն մասին եթէ գրէի, ամէն մարդ խելքի պիտի կարծէր զիս:

Եւ մտածեցի: Մարդու երեւակայութիւնը իսկապէս անառակ տղու մը կը նմանի: Ան երբեմն մեզ կը թողու ու կը սկսի վազել: Այնքան արագ կը վազէ, որ չենք կրնար հասնիլ իրեն: Արուեստագէտները գիտեն: Բասնաստեղծները գիտեն: Գրողները գիտեն: Մասնաւոր երաժիշտները գիտեն: Միտաբանները գիտեն: Իրականութեան մէջ ամէն մարդ գիտէ: Գիտենք, որ մեր երեւակայութիւնը մեզմէ շատ աւելի արագ կը վազէ: «Կանգ առ, սպասէ», կը պահանջ, ականջ չի տար: Ամէն ինչ կը վատնենք անոր ետեւէն վազելու համար: Ի վերջոյ կը մնանք շնչասպառ: Կը յուսահատուինք: Կը թողուք որ երթայ: Կ'երթայ ու կը կորսուի: Կը կորսուի տղու մը նման, որ աչկապուկ կը խաղայ, որ ծառի մը ետին կը թաքնուի, ու զանկարծ մէջտեղ կ'ելլէ երբ մենք այլեւս դարձած ենք զայն փնտռելու:

Հակառակ իր անառակութեան եւ իր սանձարձակ վազքին, երեւակայութիւնը մարդու լաւ ընկերն է: Երեւակայութիւնը մարդու մտքին եւ սրտին լաւ ընկերն է: Մեր մտածումը որքան ցամաք ու անհրապույր կը դառնար, եթէ մտածելու մեր կարողութեան քով չուենասանք երեւակայութիւնը կարողութիւնն ալ: Երեւակայութիւնն է, որ մեր մտածումներուն առջեւ յանկարծ դուռ մը կը բանայ ամէն անգամ որ մեր մտածումը պատի մը հետ զէմ յանդիման կու գայ, ամէն անգամ որ մեր մտածումը անելի կը մատնուի, ամէն անգամ որ երթալիք տեղ չի գտնուի: Երեւակայութիւնն է, որ մտածումը կը փրկէ իր գործընկէն, գոյն ու փայլ կու տայ մտածումին, յանկարծ կ'երիտասարդացնէ մտածումը, կենսունակութիւն կու տայ անոր, զայն դուրս կը բերէ հիւանդի անկողինէն ու կը տանի զէպի գունազեղ հորիզոններ:

Ծատեր կը կարծեն, որ երեւակայութիւնը մեր մտածումին շարունակութիւնն է: Կը կարծեն, որ երբ կը սկսինք մտածել, սկսած ենք նաեւ երեւակայել: Նոյնիսկ կրնան կարծել, որ մտածումը ուրիշ բան չէ եթէ ոչ երեւակայութիւն:

Պիտի ըսեմ, որ ասիակ խաբկանք է: Ծատեր շատ լաւ կը մտածեն, բայց ուժեղ երեւակայութիւն չունին: Որովհետեւ յստակ տարբերութիւն մը կայ մտածելու ու երեւակայելու միջեւ, բայց յստակ չէ այն սահմանագիծը, ուր մտածումը կը վերջանայ ու երեւակայութիւնը կը սկսի: Իրաւ ալ, ո՞ր կը վերջանայ մտածումը: Մտածումը կը վերջանայ հոն ուր մենք մեզի ծանօթ ըլլող շինանիւթերը քով քովի բերելով հանդերձ չենք կրցած շէնք մը կառուցանել, կամ տեսած ենք, որ կիսաւարտ մնացած է շէնքը: Եթէ չունինք ուժեղ երեւակայութիւն, չենք կրնար կառուցումը հոն կանգ կ'առնէ: Բայց եթէ չունինք երեւակայելու ուժ, մեր միտքը յանկարծ կը սկսի ստեղծել նոր շինանիւթեր, որոնք նոր տեսիլներ կը ստեղծեն մեր աչքերուն առջեւ: Թերեւս անիրական են այդ տեսիլները, որովհետեւ երեւակայութիւնը գործ ունի անտեսանելիին հետ, կամ միայն երազողին ու երեւակայողին կողմէ տեսնուած անիրական պատկերի մը հետ, բայց մեր միտքը երեւակայական այդ պատկերին պէտք ունի, որպէսզի այդ անիրական պատկերէն ներշնչուելով օր մը անոր իրական պատկերը ստեղծէ: Բոլորէն տեսանելի նոր պատկեր մը, նոր շինանիւթ մը: Նոր հորիզոն մը: Նոր գոյն մը ու փայլ մը: Պատկեր մը՝ որ աստղեր կը բոցավառէ մեր մտքի երկինքին վրայ: Պատկեր մը՝ որ մեզի պիտի բացատրէ, թէ երկրագունդի վրայ ոչինչ աւարտուն է եւ ամէն վայրկեան նոր բան մը կը ստեղծուի: Երկրագունդին վրայ ամէն վայրկեան նոր լոյս մը կը վառի հոս ու հոն, եւ այդ լոյսն է որ բան մը պիտի փոխէ մեր կեանքին մէջ, գոնէ մեր զաւակներուն կեանքին մէջ, կամ գոնէ մեր յաջորդներուն կեանքին մէջ:

Եթէ բժիշկները օր մը կարենային գտնել, թէ մարդու ուղեղին ո՞ր մասն է, որ մեզի կու տայ երեւակայութիւն կարողութիւն եւ եթէ անմտօրէն չորցնէին ուղեղին այդ մասը, կեանքը կանգ կ'առնէր հոն ուր կը գտնուի: Ամէն առաջիմուռութիւն զաւակն է օրինաւոր այն ամուսնութեան, որ կը կնքուի մտածումին ու երեւակայութեան միջեւ: Մէկը հայրն է, միւսը մայրը: Մէկը կը սերմանէ, միւսը իր արգանդին մէջ կը ստեղծէ: Ամբողջ հարցը սա է. մենք կրնանք քայլ յարմարեցնել մեր երեւակայութեան արագութեան ու անառակութեան:

Ռ. Հ.

«ԱԶԳԱԿ»-ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետևելու թիւերուն. 258526, 260115 եւ 241274:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԵԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ՑԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Ինչքան ալ սխալ են- թաղորութիւններու տեղի տայ նոյնպիսի վերնազիր մը, դարձեալ չի դադարիր մէջ պարփակելէ այն բոլոր տեսակի ցանկութիւնները, փափաքները, որոնք գլխաւոր ցանկութեան մը ձեռք ձգուածով ամբողջականօրէն կ'իրագործուին:

Մեծագոյն այդ ցանկութիւնը անհատապէս անկախ ըլլալու, ազատապէտելու ցանկութիւնն է, որմէ կախումնաւորութիւն ունին միւս բոլոր ցանկութիւնները, որոնք նորափոխութիւն կեանքերու միտքին մէջ երազ իրրեւ կը թեւածեն:

Երիտասարդութեան տարիքը հազիւ թեւակոխած, հօրմէն տարբեր մտածելու փորձութեան զոհը կը դառնան բազմաթիւ երիտասարդներ: Մօր թելադրութեանէն տարբեր գոհը կը դառնան բազմաթիւ յետադուրեւ մը վրայ պնդելու յետադուրեւ մը կը լեցուին պարմանութիւններ, օժանդակ միջոցներու իսկ դիմելով հաստատելու իրենց որոշման առաւելութիւններն ու կարեւոր դիւնք է անոր՝ կեանքին

րութիւնը: Յատկապէս Արեւմտեան քաղաքակրթութեան գարգացուցած գաղափարներէն մին է, պատարհանութեան տարիքէն անկախ մտածելու վարժեցնել մարդը, որպէսզի «սորվի առանձին լոյսով կեանքի ովկիանոսին մէջ»: Տեսնըներ իրենց ազատ կամքով իրենց զաւակներուն համար առանձին յարկարարութիւններ կը վարձեն մօտակայ կամ հեռավոր քաղաքներու մէջ, քաջալերելով անկախապէս ձգտումը անոնց մէջ, սկսեալ տասը-միտքին մէջ երազ իրրեւ կը թեւածեն:

Անկախ այն իրողութեանէն որ մեծ տարբերութիւն գոյութիւն ունի տախած, հօրմէն տարբեր մտածելու փորձութեան զոհը կը դառնան բազմաթիւ երիտասարդներ: Մօր թելադրութեանէն տարբեր գոհը կը դառնան բազմաթիւ յետադուրեւ մը վրայ պնդելու յետադուրեւ մը կը լեցուին պարմանութիւններ, օժանդակ միջոցներու իսկ դիմելով հաստատելու իրենց որոշման առաւելութիւններն ու կարեւոր դիւնք է անոր՝ կեանքին

նոր բացուելուն, գարգանաւուն, իմացապէս յառաջդիմելուն ու ընդհանուր անմասն:

Հաստատութեանց կամ միտքեան մէջ երկարատեւ զեկավարի դիրքին վրայ մնացողներ նոյնպիսի զօտարութեան առջեւ կը զտնուին, չկարենալով կ'ըստ. «Լաւ կ'ստեղծէ, թե ով որ մեղք կը գործէ՝ ծառայ է մեղքին» (ՅՏ. 8:34): Մեղքը՝ բարոյական կեանքի այս մեծ բռնաւորը, իր իշխանութիւնը կը տարածէ մարդուն վրայ հետ անկախանալու ձգտումը եւս աճ կ'արձագրէ, միտքի կազմաւորումով, ճաշակներու գարգացումը եւ ընդհանուր հասունութեամբ: Ահա պատճառներէն մին, ընկերային կեանքի մէջ տեղի ունեցող յաճախակի բախումներուն:

Արեւելեան մտայնութեամբ երկիրներու մէջ ալ նոյնպիսի բախումներու կը հանդիպինք ընտանեկան կեանքէն ներս, ուր տուժող կողմը ընդհանրապէս կրտսերն է, որուն մէջ թէեւ անկախանալու ձգտումը հասակին հետ կ'աճի, սակայն անկարող է ընկերային գոհածքը փոխել, ուստի՝ կը համակերպուի ու կը հատուի իր ըստիտին հետ: Մինչ արեւմտեան մտայնութեամբ, կրտսեր եղողը պիտի չհամակերպուի իր կրտսերութեան եւ ընդհանրապէս պիտի չտուժէ, որովհետեւ կանխորոշուած պիտի անկախացնէ ինքզինք իր ծնողքէն, կամ անկէ՝ որմէ կախում պիտի ունենար:

Անկախանալու ցանկալի վիճակին մեծագոյն վտանգը կամ փորձութիւնը սակայն՝ մեղքն է: Այն ժողովուրդները, որոնք անկախ չեն երեւել, որ իրենց ճակատակը կը տնօրինեն, այլ ուրիշներ: Մարդիկ առհասարակ կը վախնան գերեզմարտէն ու մասնաւոր բռնապետներէ:

Ջարմանալի է սակայն, որ հակառակ իրենց ունեցած այս սարսափին, մարդիկ «մեծ սիրով» կ'ընդունին սահմանները: Իր շրջապատը կամ փորձութիւնը՝ գիտակից ազատութիւն կարելի է կոչել, որուն գործունէութիւնը բարոյական օրէնքներու համար էլ կը ծառայէ:

Ի՞նչ իմաստ ունի երիտասարդի մը անբարոյ ազատութիւնը, կամ անկարգ ինքնիշխանութիւնը: Ատիկա կը նմանի

անմիտ թուշնիկի մը, որ մէկ վանդակէն զէպի ուրիշ մը փոխադրուելէ ետք այնպէս կը կարծէ, որ իր ազատութիւնը գտաւ: Իր կարծած ազատութիւնը, դարձեալ արգելափակում է, ինչպէս երիտասարդին ցած տիրապետութեան հանգամանքին մասին: Ան կ'ըստ. «Լաւ կ'ստեղծէ, թե ով որ մեղք կը գործէ՝ ծառայ է մեղքին» (ՅՏ. 8:34):

Մեղքի մը հովանաւորութիւնը երբեք ալ բռնատիրութեան հետ պէտք չէ շփուի: Միթէ սէրը շփուի, առանց նկատի առնելու, Բռնաւոր մը իր ունեցած ատելութեան հետեւանքով ու անգթութեամբ կը գերեզմարէ ժողովուրդները, առանց նկատի առնելու ամբոխին մէջ գտնուող այս կամ այն անձը: Մեղքը նոյնպէս, չի՞ նայի թէ որ ու կամ ինչքան բարեպաշտ մէկու մը զաւակն է այն՝ որ իր գոհը պիտի դառնայ: Այլ՝ անգթութեամբ անոր ձեռքերն ու ոտքերը կը շրջապէս, ու իր ամբողջական ազատութիւն համարելով կ'առաջնորդէ կեանքի ամէնէն վտանգաւոր ու կործանարար ճամբաներէն, որոնք այսօր ականաւած են թացքին ծնունդ կ'առնէ:

Նոյնպէս չէ՞ եղած պատմութեան ընթացքին իր ազատութեամբ շփացած ժողովուրդներու վախճանը, երբ չափազանց ազատութեամբ՝ ազատութիւնը անիշխանութեան հետ շփուած են ու յոյսահալով՝ կործանած: Նոյնն է պարագան նաեւ անհասական ծնողքի կամ ուրիշներու կարծիքը առնելու այդ մասին, չկարծես որ տիրացար մեծագոյն ցանկութեանդ՝

Ինչքան ալ մտածես ազատ խորհելուդ կամ ազատ ապրելուդ մասին, որով կարենաս ընել այն ինչ որ դու կ'ուզես, անանց կարիք ունենալու ծնողքի կամ ուրիշներու կարծիքը առնելու այդ մասին, չկարծես որ տիրացար մեծագոյն ցանկութեանդ՝

Մեծ բռնաւորը՝ մեղքը, մտրակը ձեռքին կը սպասէ գլխուդ վերեւ, ստորնացնելու եւ ստրկացնելու համար էլ կը ծառայէ:

Մեղքը պիտի իշխէ վրադ, թէ՛ դուն մեղքին... Խորհէ՛ այս մասին:

ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՐԴ. ԶԻՖՈՃԵԱՆ
«Գաւթասար»

ՀԱՅ ԱՒԵՏ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՎԱՐՄԱՐԱՆ

Աստուծոյ ապաւինելով՝ 2003 - 2004 տարեշրջանի սկզբնական արձանագրութիւնները, նախկին եւ նոր աշխտատեղի ու համար, սկսած են եւ կը շարունակուին, ամէն օր առաւօտեան ժամը 8:30էն 1:00 (բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն):

Նորեկ աշակերտներն կը պահանջուի՝ ա. Վերջին երկու տարուան վիճակագրոյցը. Ինքնուրուի թուրքի լուսապատճառը. Երկու նոր լուսապարտը. Բարի վարուց վկայագիրը. Եւ՝ նախկին վարժարանէն աշակերտին պետական թիւը՝ վաւերացուած:

ՎԵՐԱԵՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ տեղի պիտի ունենան առաւօտեան ժամը 10:00ին:

- Չորեքշաբթի, 17 Սեպտեմբեր 2003 - Լեզուական միութիւն
- Հինգշաբթի, 18 Սեպտեմբեր 2003 - Թուրքալեզուներու գիտական միութիւն
- Ուրբաթ, 19 Սեպտեմբեր 2003 - Պատմութիւն, աշխարհագրութիւն եւ այլ միութիւն

ՎԵՐԱՍՈՒՏ ա. BREVET եւ BACC II Երկուշաբթի, 15 Սեպտեմբեր 2003

Երկրորդական, միջնակարգ եւ նախակրթարան - Չորեքշաբթի, 1 Նոյեմբեր 2003
Սահակապարտը - Հինգշաբթի, 2 Նոյեմբեր 2003
Նկատի ունենալու՝ հետեւեալները.
Գրախաճուրդը բաց է Երկուշաբթի, 8 Սեպտեմբեր 2003էն սկսեալ:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

Le Savoir-Faire en Lumière

G. AYANIAN & SONS

Dora, (01)255222/3/4/5/6
Gemmayze, (01)447000-445396
(03)627728/9
Fax: (01)265187-582357
E-Mail: gasons@dm.net.lb
www.ayanian.com

ԱՖՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՄԱՐԲԵՐՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

RENT AND SALE

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

• Over Bed Table
• All Kinds Of Oxygen We Also Provide
• Laboratory service.
• Physiotherapist
• Nurses Aids
• P.T.S. (AMBULANCE)

ՑՈՒՑԱՍԱՐԱՐ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆԹՐ ԳՐԱՍԵՆԱԿ՝ ԱՅԿԻԼ, ԱՅԵՏԻ ՃԵԼԸ, Բ. ՅԱՐԿ ԵՏԻ. (01) 242555/7

NO MATTER WHAT YOU NEED... ... OR WHERE YOU NEED.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

Հայեր եւ փորձուցալիք, հակառակ քաղաքական վերիվալտուրներուն, փորձուցալիքն զերիշխանութեան անկման ու Սպանիոյ հետ միութեան, յատկապէս Հնդկաստանի մէջ մնացին գործակիցներ՝ կրօնական, քաղաքական եւ առեւտրական տարբեր մակարդակներու վրայ:

ՀԵՆՐԻԳԷ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԳԱՀԱՎԱԼՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ

Մաւրերու դէմ պատերազմին Սեպտեմբրեան թագաւորին նահատակութենէն ետք, 1578 Օգոստոսին, անոր յաջորդեց Մանուէլ Ա. Թագաւորին զաւակը՝ Հենրիգէ (Հենրի)։ ան ծնած էր 31 Յունուար 1512ին, Լիզպոն եւ եկեղեցական ծառայութեան մէջ մտնելով յաջորդաբար, 1534ին՝ Պրակայի, 1540ին՝ Էվորայի եւ 1564ին Լիզպոնի արքեպիսկոպոս, իսկ 1545ին կարտինալ եղած էր: Յիսուսեաններուն մօտիկ արկից՝ 1558ին հիմնած էր Էվորայի Յիսուսեան համալսարանը: Գահ բարձրանալէն ետք ան ծանօթ դարձաւ իր բնական կարտինալ-թագաւոր (փորձուցալիքէն) Հենրիգէ օ քարտէշալ-ռէյլ): Այս ժամանակ փորձուցալիք ամէն ջանք կը



Սանթա Վինսենթե վանքը Լիզպոնի մէջ կառուցուած՝ ժՁ. դարուն

Թափէին Հնդկաստանի մէջ Մեծ Մոդոլ կայսրութեան դահակ Աքպար կայսեր հետ բանակցութեան մտնելու համար եւ այդ նպատակով այդ դիմեցին հայերուն, նկատի ունենալով, որ հայերը ազդեցիկ դերակատարութիւն ունէին Աքպարի արքունիքին մէջ:

Փորձուցալիքներուն մօտիկ գործակից հայ մը, որ անոնց ծանօթ էր ժուան կասէջ Արմենիո անունով եւ Պենկալի նաւահանգիստ Սաթկառնի մէջ կը բնակէր, 1578ին իր բնակարանէն ընկերակցեցաւ փորձուցալիք կրօնաւոր ժիլ Էանջ Փեռէյրայի, որոնք Ազրա հասնելով ընդունուեցան կայսեր կողմէն եւ բանակցեցան անոր հետ:

Իր կարգին, Աքպար կայսր եւս աշխատեցաւ ապահովել փորձուցալիքներուն բարեկամութիւնը: փորձուցալիքներուն մօտիկ հայ մը, որ անոնց ծանօթ էր Տոմինիօ Փիրէջ Արմենիո անունով եւ իր բնակարանէն կը ծառայէր Աքպարի մօտ 1580ին անոր կողմէն զրկուեցան կոս, յիսուսեաններուն մօտ, բանակցութեան համար: Տոմինիօ Փիրէջ իրեն հետ Ազրա տարաւ յիսուսեան միաբաններ Անթոնիօ տը Մոնսերրաթը, Ռոտտոլֆօ Աբուսէիսան եւ Յրանսիսքօ Հենրիգէջը: Հենրիգէ թագաւոր մահացաւ 31 Յունուար 1580ին, Փորձուցալի Ալմէյրիմ քաղաքին մէջ, 68 տարիքը թեւակոխած օրը:

ՀԱՅ-ՓՈՐԹՈՒԳԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԷՁ

ՍՊԱՆՈՑ ՀԵՏ ՄԻՈՒԹԻՒՆ

Հենրիգէ թագաւորին մահէն ետք Սպանիոյ Ֆելիքէ Բ. Թագաւոր, Հապսպուրկներու տունէն եւ զաւակը Հոնդական Սրբազան Կայսրութեան Քարլ Ե. կայսեր եւ անոր փորձուցալի կնոջ՝ Իզապէլլայի, Փորձուցալի գահին յաւակնորդ ներկայացաւ իր բնական ժառանգութիւնը եւ անմիջապէս մեծ բանակ մը ուղարկելով՝ գրաւեց երկիրը:

Ֆելիքէ Բ. Փորձուցալ մտաւ եւ իր բնակարանի պետութեան դահակալ ինքզինք հռչակեց Ֆելիքէ Ա. թագաւոր. թոմարի մէջ 1581ին կայացած ազնուականներու հաւաքը հաստատեց զայն իր բնակարանի պետութեան գահակալ:

Ֆելիքէ Ա. խոստացաւ երաշխաւորել Փորձուցալի ինքնավարութիւնը իր բնական անձնական միութիւնը, այնպէս՝ ինչպէս որ Արալիս եւ Քասթիլիա միացած էին Ֆենուանտոյի եւ Իզապէլլայի ամուսնութեամբ: Փորձուցալիք պիտի պահպանէին իրենց տեղական վարչական բոլոր իրաւասութիւնները եւ փորձուցալիքին ներկայացուցչութիւնը մը պիտի մնար Մատրիսի մէջ:

Սպանական գրաւումէն ետք թերսէյրա եւ Ազորեան կղզիները Քրիստոֆ Կոլոմբոսի Անթոնիօ Նավարոյի տակ անցան, որ Անդլիոյ եւ Յրանսայի հետ դաշնակցութիւն հաստատեց: Յրանսացիք 1582ին փորձեցին զայն Ազորեան կղզիներուն վրայ հաստատել, բայց չյաջողեցան: Իրենց կարգին, անգլիացիք 1589ին փորձեցին Լիզպոնի վրայ քայլել սըր Յրանսիս Տրէյքի եւ սըր Ջոն Նորրիսի հրամանատարութեամբ, բայց պարտուեցան:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉԻ ԳԵՊՊՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

Փորձուցալի վրայ գերիշխանութեան հաստատումէն ետք, Ֆելիքէ թագաւոր, Հնդկաստանի ճամբու ապահովութեան եւ փորձուցալի տիրոջներու պահպանութեան համար որոշեց Պարսկաստանի հետ կապը պահել: Իր հրամանով Հնդկաստանի փոխարքայ տոն Յրանսիսքօ Մասքարինիաջ Հորմուզի Օգոստինեան միաբանութեան վիճակաւոր եղբայր Սիմոն տէ Մորաշէ (ծանօթ է նաեւ Սիմոն տէ Քոնզէիսան անունով) փորձուցալի կրօնաւորը 1582ին ղեսպան նշանակեց պարսից շահին հետ բանակցելու համար: Ֆելիքէ թագաւոր նամակ գրեց շահին եւ զայն ուղարկեց Հնդկաստան, որպէսզի Սիմոն տէ Մորաշէ զայն յանձնէ շահին:

Իր բնական զիտական առաքելութեան ծանօթ անձ՝ փորձուցալիքներուն մօտիկ բարեկամ էր Կոս բնակող հայ մը՝ Յովհաննէս Մկրտիչ, որ ծանօթ էր նաեւ Աքպարեան անունով: Ան նախապէս նախօրի փոխարքայ Ինիկօ Լոպիէս տէ Մենտոսայի կողմէն ղրեւանագիտական առաքելութեան մը ուղարկուած էր շահ Մուհամմէտ Խոստապանտէի մօտ եւ յաջողութեամբ գլուխ հանած էր իրեն վստահուած առաքելութիւն: Յետոյ կոս վերադառնալով Յովհաննէս Մկրտիչ պիտի մեկնէր Փորձուցալ, բայց նաւատորմը արդէն մեկնած ըլլալով՝ մնաց հետեւաբար փոխարքայ Մասքարինիաջ անկէ խնդրեց, որ ընկերակցի Սիմոն տէ Մորաշէի:

Այսպիսով Սիմոն տէ Մորաշէ եւ Յովհաննէս Մկրտիչ Կոսայն մեկնեցան Պարսկաստան եւ հասան Քաշան՝ տեսնուելու շահ Մուհամմէտի հետ, բայց արդէն շահը հոնկէ մեկնած էր դէպի Խո-

րասան: Հետեւաբար Սիմոն տէ Մորաշէ իր կողմէն լիազօրեց Յովհաննէս Մկրտիչը, որպէսզի բանակցի շահին հետ եւ յանձնէ թագաւորին նամակը, եւ ինք վերադարձաւ:

Նոյն օրերուն Սիմոն տէ Մորաշէ 20 Հոկտեմբեր 1582 թուակիր նամակ մը ուղարկեց Գրիգոր ԺԳ՝ պապին՝ զայն տեղեակ պահելով Պարսկաստան իր ղեսպանական առաքելութեան մասին:

Նշենք, որ հետագային Սիմոն տէ Մորաշէ առիթ ունեցաւ տեսնուելու շահին հետ եւ Հնդկաստան վերադարձաւ պարսիկ ղեսպանի մը ընկերակցութեամբ: 1585ին Մորաշէ եւ պարսիկ ղեսպանը «Քարի ճանապարհ» նաւով ճամբայ ելան դէպի Եւրոպա, բայց մուսոն հովերու եղանակով ըլլալով՝ նաւը սաստիկ փոթորիկի բռնուեցաւ եւ ընկղմեցաւ:

ՍԱՐԳԻՍ ԱՔԵՂԱՅ ՓՈՐԹՈՒԳԱԼԻ ՄԷՁ

Հայոց ամէնէն կարեւոր հոգեւոր կեդրոններէն՝ Վարազա վանքէն Սարգիս արեղայ 1587ին ուխտագնացութիւն մը ձեռնարկեց դէպի Եւրոպա եւ հասաւ Հռոմ, ուր մնաց մէկ տարի եւ այցելեց Ս. Պետրոս ու Պողոս առաքելներու գերեզմաններուն: Իտալիայն անցաւ Յրանսա եւ Նանթէն քահանայի օրէն հասաւ Պիլյաօ, ուր կէ քայլելով հասաւ Սանթիակո տէ Քոմփոսթելա: Սակայն այդ ժամանակ Սուրբ Յակոբի դամբարանը տանող դուռը փակ ըլլալով՝ Սարգիս արեղայ ու թ մասին սպասեց ուխտը կատարելու համար: Այնուհետեւ ան անցաւ Փորձուցալ:

Փորձուցալի մէջ ան չըջապողտի ձեռնարկեց, այցելեց Վալանս, Քամիլիա, Պրակա, Վիլլա Նովա Վիանա եւ հասաւ Փորթո, որ իր երկու հարիւր եկեղեցիներով ու սուրբերու հարիւր մասունքներով եկեղեցիներու եւ սուրբերու քաղաք կը նկատուի: Այնուհետեւ ծովու ճամբով մեկնեցաւ Կոլիա, ուր կէ անցաւ Քուլմապոս, հոնկէ ալ՝ Սանթարէմ, Քասթանէյրա, Սարաէմ եւ Լիզպոն:

Փորձուցալ իր շրջագայութեան մասին խօսելով՝ Սարգիս արեղայ կ'ըսէ, որ լեզուին անծանօթ ըլլալով՝ բաւական չարաբարութիւն է, մինչեւ որ կրցած է սորվիլ: Իսկ Լիզպոնի համար կ'ըսէ, որ անիկա շատ մեծ քաղաք մըն է հարիւր հազար տուն բնակչութեամբ, ուր կան երեք հարիւր եկեղեցիներ, իսկ նաւահանգիստին մէջ հինգ հարիւր նաւեր:


Սարգիս արեղայ Լիզպոնի մէջ ընդունուեցաւ Ֆելիքէ թագաւորին կողմէն, որ յարգալիբ վերաբերմունք ունեցաւ անոր հետ եւ իր կողմէն նուէր մը տուաւ հայ հոգեւորականին:

Լիզպոնէն Սարգիս արեղայ նաւով մեկնեցաւ Ալամոնթէ, ուր կէ յետոյ անցաւ Սելիլիա եւ յետոյ վերադարձաւ Հայաստան:

Նշենք, որ նոյն ժամանակամիջոցին Լիզպոնի մէջ կը բնակէր Մոնսի եպիսկոպոս Փառլօ Փաշիքօ, որ 1590ի յիշատակարանի մը մէջ յիշուած է իր բնակարանի եպիսկոպոս:

ՀԱՅ ԱՂՁԻԿՆԵՐ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԷՁ

Սպանիա, Փորձուցալի տիրելէ ետք, աշխատեցաւ ամրապնդել Փորձուցալի կողմէն Հնդկաստանի մէջ հաստատուած ամուսնութիւնները եւ զօրացուց կոսայի զօրագունը: Միաժամա-



Բելուգ դղեակը հարաւային Փորթուգալի մէջ

նակ Ֆելիքէ թագաւոր 1596ին Հնդկաստանի փոխարքայ Յրանսիսքօ տա կամայի հրահանգեց հսկել Հրոմուզի հրամանատարին տրուած հրամանին գործադրութեան, առանց գայթակղութեան տեղի տալու, որ վենետիկցիներ, հայեր եւ ուրիշ օտարականներ մուտք գործեն Հնդկաստան:

Նոյն ժամանակ Պարսկաստան առաքելական գործունէութիւն կատարող փորձուցալի կրօնաւորներ հայր Պելլիոր տոս Անթոնս եւ հայր Կիլերմէ տէ Սանթօ Ակոսթինիօ Հնդկաստան վերադարձին իրենց հետ Կոս տարին վեց հայ, երեք թուրք, մէկ քիւրտ եւ մէկ վրացի աղջիկներ, ինչպէս նաեւ մէկ հայ եւ երկու թուրք տղաք: Այդ աղջիկները, որոնք գեղեցիկ էին եւ հեղաբարոյ, տրուեցան սպանացի եւ փորձուցալի քաջամարտիկ ֆիտալիոներու:

ՀԱՅ ԵՒ ՓՈՐԹՈՒԳԱԼՅԻ ՀՈՂԵՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՓՈՐԾՈՒՆԵՒԹԻՒՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԷՁ

Փորձուցալիք Հնդկաստանի մէջ լայնածաւալ քարոզչութեան ձեռնարկած էին ընկերները քրիստոնեայ դարձնելու համար, եւ ընկի հնդիկներէն Կոսայի եւ շրջակայքին մէջ բաւական մեծ կաթողիկ համայնք մը կազմաւորուած էր անոնց սերունդները, որոնք փորձուցալի կը կոչուէին, մինչեւ հիմա Հնդկաստանի քրիստոնեայ ամէնէն զօրաւոր համայնքներէն են եւ:



Սանթիակո տէ Բոսիսթելայի տաճարը

ամուր կերպով պահած են իրենց հաւատքը: Կոսայի քրիստոնեաները իրենց կարգին քարոզչութեան ձեռնարկեցին երկրի տարբեր շրջաններուն մէջ եւ յատկապէս հարաւային Հնդկաստանի մէջ լատին համայնքներ կազմակերպեցին:

Հայ հոգեւորականներ իրենց կարգին գործունէութիւն ունէին Հնդկաստանի մէջ, որոնք տարբեր ժամանակներ տարբեր վայրերու մէջ գործակցեցան կամ կապեր հաստատեցին փորձուցալի եւ կոսայի հոգեւորականներու հետ: Հայ հոգեւորականներ մինչեւ իսկ իրենց հեղինակութիւնը ի գործ դրին օգտակար ըլլալու համար փորձուցալիքներուն: Այսպէս, Քոչին հաստատուած հայ եպիսկոպոս մը յիսուսեաններուն մօտիկ գործակից դարձաւ, իսկ Ազրա բնակող Գրիգոր սարկաւազ, որ Աքպար կայսեր արքունիքին հետ կապեր ունէր, 1589ին կոս մեկնեցաւ փոխարքայն յիսուսեան քարոզչներ խնդրելու համար:

Փորձուցալի միախոնար ժերոմ Խալիէ, որ 1571ին կոս հաստատուած էր, իր բնակարանի ղեսպան Ազրա, Աքպարի արքունիքը: Հոն ան հանդիպումներ ունեցաւ տեղացի հայերուն հետ եւ խօսեցաւ Հնդկաստանի մէջ հայ եւ փորձուցալի հոգեւորականներու եղբայրական յարաբերութեան եւ համերաշխ գործակցութեան մասին: Նշենք, որ Ազրայի մէջ առաջին եկեղեցին կառուցած են հայերը, երկրորդը կառուցեցին փորձուցալիք:

Ընդհանուր առմամբ հայ եւ փորձուցալի հոգեւորականներ համերաշխ գործունէութիւն ունեցան Հնդկաստանի մէջ, եւ շատ մը պարագաներու հայ հոգեւորականներ նպաստեցին կաթողիկ հոգեւորականներու գործունէութեան:

ԿՈՍ՝ ՓՈՐԹՈՒԳԱԼԱԿԱՆ ԱՒԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ԱՊՐՈՂ ՇՐՋԱՆ

Հնդկաստանի մէջ փորձուցալիքական տիրապետութեան խարխիւր եղած է Կոսը, որ միջնէն հիմա այլ պահած է գաղթատիրական ժամանակաշրջանի իր նկարագիրը:


Կոս կը գտնուի Հնդկաստանի հարաւարեւմուտքը, Պոմպէյէն 400 քիլոմէթր հարաւ եւ 1987ին կազմաւորուած է իր բնական առաջին նահանգը. անիկա բաղկացած է Էիմ Կոս (Վելիս Կոս), Փանաթի (Մախապէս Փանաթի) քաղաքներէն եւ յարակից գիւղերէ:

Էիմ Կոս քաղաքը, որ Արեւելքի Հռոմը կը կոչուի իր բազմաթիւ եկեղեցիներուն համար, կը գտնուի Մանտալի գետի ձախափին եւ մեծ մասամբ աւերակ է. կանգուն են ու կը գործեն մայր տաճարը, հիմնուած՝ Աֆոնսո տէ Ալպուրգեթի կողմէ, 1511ին եւ վերակառուցուած 1623ին, Սան Յրանսիսքօ վանքը կառուցուած 1517ին եւ վերակառուցուած՝ 1661ին, Սան Քաթրին մատուռը, կառուցուած 1551ին, Պոմ ժեսու տաճարը կառուցուած 1594-1603 տարիներուն, ուր կը գտնուի Հնդկաստանի մայրաքաղաքի վերելքի մէջ միսիոնարի կառուցած աւազանով գործունէութիւն կատարած Սան Յրանսիսքօ Խալիէի դամբարանը: Փանաթի Էիմ Կոսայի արուարձանն է եւ:

Յոյն պէս կը գտնուի Մանտալի ձախափին. անիկա արդիական ոճով կառուցուած քաղաք է եւ Կոս նահանգի մայրաքաղաքը:

Կոսայի ծովափնային գօտին դաշտային է, իսկ դէպի արեւելք կ'երկային բլուրներ ու լեռներ՝ միջնէն 1,034 մէթր բարձրութեամբ: Գլխաւոր գետերն են՝ Մանտալի եւ Զուարի. ծովափին կան կղզիներ: Կլիման արեւադարձային է, անձրեւները՝ առատ: Երկրագործական հարուստ շրջան՝ ամէնուրեք տարածուած են բրինձի դաշտեր եւ մանկալի ու հնդկական կոյուղի ծառաստաններ: Զարգացած է ձկնորսութիւնը:

Կոս նահանգը 1,340,000 բնակիչ ունի, որուն քառասուն առ հարիւր կաթողիկ դաւանաւոր քրիստոնեաներ են. մնացեալները՝ հիմնուած են իսլամներ: Քրիստոնեաները կրօնը գիտենք կը կոչեն փորձուցալի կրօնը բուն փորձուցալիքական ծագում ունեցող քրիստոնեայիցիներու ու տեղացիներու յառաճողը են: Թ'խաղէմ, հնդկական դիմազիծով, անճից յստակեցան լեզու փորձուցալիքները, հնդկալեզու եւ անգլերէնէն է մեծամասնութեամբ փորձուցալիքական անուն եւ ազգանուն կը կրեն:




Սանթիակո տէ Բոսիսթելայի Գեթեմաճարը

ԱՍՊԵՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ՓԻՆԿ ՓՈՆԿԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՅԱՏԱԿԱՆ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԻՒՆԸ ՍԿՍԱԻ

Երեկ Մոն Լա Սալի մեջ սկսան Լիբանանի փինկի անհատական ախոյեանությունները: Առաջին օրուման յայտագիրին վրայ էին տրոհ 1986-1987ի եւ 1992-1993ի ծնունդ դասակարգերուն մրցումները:

1986-1987ի ծնունդ դասակարգին մասկարգը Հ. Մ. Լ. Մ. ական երկու մարկիկներ՝ Սերու Զամիլեան (Անթիլիաս) եւ Հրայր Պողոսեան (Անթիլիաս) յաջողաբար պարտութիւն կրելէ ետք Տէնի Սրբաբարէն (3-1) եւ Ռամի Շրքէրեան (3-1) դուրս մնացին մրցաշարքէն: Այսպիսով, Հ. Մ. Լ. Մ. այս դասակարգին մէջ չկրցաւ ախոյեան մը ունենալ:

Տարբեր էր պարագան սակայն 1992-1993 դասակարգին, որուն իրենց մասնակցութիւնը կը բերէին Հ. Մ. Լ. Մ. ական հինգ մարկիկներ:

Հրակ Պետոյեան (Թրիփոլի) 3-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք ժորժ Սալամունին ապահովեց կիսաարտականին իր տոմը, ուր նոյն արդիւնքով պարտութեան մատնեց Արմէն Պուճիբեանը (Թրիփոլի), որ նախքան իր այդ մրցումը կատարելը 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Հիշամ Թաուիլը:

Վարանդ Պոյաճեան (Թրիփոլի) իր կատարած առաջին մրցումին 3-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Ալի Աուատան, երկրորդ մրցումին 3-1 արդիւնքով պարտութիւնը մը կրելէ ետք Միշէլ Թաուիլը, դուրս մնաց:

Իր կարգին, Հայկ Գրասեան (Անթիլիաս) իր կատարած առաջին մրցումին 3-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Քարլ Քաշուրը, երկրորդին 3-0 արդիւնքով պարտութիւնը մը կրելէ ետք Աւո Մունջողլեանէն (Պէյրութ) դուրս մնաց:

Աւո Մունջողլեան կիսաարտականին 3-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Միշէլ Քասոն, ապահովեց արտական մրցումին իր տոմը: Աւարտականին, որ եղաւ զուտ Հ. Մ. Լ. Մ. ական Աւո Մունջողլեան հանդիսացաւ 1992-93 դասակարգի Լիբանանի ախոյեան 3-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Հրակ Պետոյեանը:

Հ. Մ. Լ. Մ. յաջողիկալ քանի մը օրերուն ընթացքին իր մասնակցութիւնը պիտի բերէ այլ դասակարգերու մրցումներուն:



Աւո Մունջողլեան

ՀԵԾԵԼԱՐՇԱԻ ՄՊԱՆԻՈՅ ՇՐՋԱՎԱԶՔԸ ԿԸ ՍԿՍԻ ՇԱՐԱԹ ՕՐ

Շաբաթ, 6 Սեպտեմբերին կը սկսի Սպանիոյ հեծելարշաւի շրջավայքը (Վուէլթա), որ կ'աւարտի Կիրակի, 28 Սեպտեմբերին: 21 հանգրուան ընդգրկող այս շրջավայքին իրենց մասնակցութիւնը բերող հեծելանորդները երկու օր միայն հանգիստ պիտի ունենան: Շրջավայքը պիտի սկսի Խիխոնէն՝ ժամացոյցի դէմ խմբային մրցումով (30 քմ.) եւ պիտի աւարտի Մատրիտի մէջ (130 քմ.):

Սպանիոյ հեծելարշաւի շրջավայքին պատասխանատուները երեկ յայտարարեցին, թէ իտալացի սփրինթեր Մարիո Զիփոլինիի խումբը՝ Տոմիկա Վաքանյէ շրջավայքէն դուրս դրուեցաւ, նկատի ունենալով, որ անկա միայն անցեալ Կիրակի օր ըսաւ, թէ Զիփոլինի իր մասնակցութիւնը պիտի չբերէ:

«Վուէլթան եւ հեծելարշաւը յարգանքի կը կարօտին: Կը նախընտրենք շրջավայքը սկսիլ 21 խումբով, փոխան՝ 22ի», ըսաւ շրջավայքին կազմակերպիչ յանձնախումբին մէկ պատասխանատուն՝ Վիքթոր Քորտերո:

36 տարեկան Զիփոլինի պիտի ըլլայ շրջավայքին գլխաւոր բացական: Ան Իտալիոյ շրջավայքին (Ժիրո) շահած է 42 հանգրուան (մրցանիշ մը), իսկ Ֆրանսայի շրջավայքին (Թուր Տր Ֆրանս)՝ 12 հանգրուան:

- Ստորեւ՝ Սպանիոյ հեծելարշաւի շրջավայքին ամբողջական յայտագիրը:
- Շաբաթ, 6 Սեպտեմբեր (առաջին հանգրուան). Խիխոնէն Խիխոն (ժամացոյցի դէմ խմբային մրցում) - 30 քմ.
 - Կիրակի, 7 Սեպտեմբեր (2րդ հանգրուան). Խիխոնէն Քանկաս Տր Օնիս - 140 քմ.
 - Երկուշաբթի, 8 Սեպտեմբեր (3րդ հանգրուան). Քանկաս Տր Օնիսէն Սանթանտեր - 160 քմ.
 - Երեքշաբթի, 9 Սեպտեմբեր (4րդ հանգրուան). Սանթանտերէն Պուրկոս - 158 քմ.
 - Չորեքշաբթի, 10 Սեպտեմբեր (5րդ հանգրուան). Մորիայէն Սարակոսա - 165 քմ.
 - Հինգշաբթի, 11 Սեպտեմբեր (6րդ հանգրուան). Սարակոսայէն Սարակոսա (ժամացոյցի դէմ խմբային մրցում) - 40 քմ.
 - Ուրբաթ, 12 Սեպտեմբեր (7րդ հանգրուան). Հուէսքայէն Քուաթերթը - 190 քմ.
 - Շաբաթ, 13 Սեպտեմբեր (8րդ հանգրուան). Քուաթերթըցէն Փլա Տր Պերթը - 166 քմ.
 - Կիրակի, 14 Սեպտեմբեր (9րդ հանգրուան). Վիելիայէն Փոր տ'Անվալիրա - 176 քմ.
 - Երկուշաբթի, 15 Սեպտեմբեր (10րդ հանգրուան). Անտորայէն Սապատէլ - 179 քմ.
 - Երեքշաբթի, 16 Սեպտեմբեր Հանգիստի օր
 - Չորեքշաբթի, 17 Սեպտեմբեր (11րդ հանգրուան). Ուրիլէն Քուէնթա - 160 քմ.
 - Հինգշաբթի, 18 Սեպտեմբեր (12րդ հանգրուան). Քուէնթայէն Ալպատերթ - 167 քմ.
 - Ուրբաթ, 19 Սեպտեմբեր (13րդ հանգրուան)

- Ալպատերթէն Ալպատերթ (ժամացոյցի դէմ անհատական մրցում) - 53 քմ.
- Շաբաթ, 20 Սեպտեմբեր (14րդ հանգրուան). Ալպատերթէն Վալտեփանաս - 160 քմ.
- Կիրակի, 21 Սեպտեմբեր (15րդ հանգրուան). Վալտեփանասէն Սիերա Տր Լա Փանտերա - 181 քմ.
- Երկուշաբթի, 22 Սեպտեմբեր Հանգիստի օր
- Երեքշաբթի, 23 Սեպտեմբեր (16րդ հանգրուան). Խաէնէն Սիերա Նեվատա - 162 քմ.
- Չորեքշաբթի, 24 Սեպտեմբեր (17րդ հանգրուան). Կրանատայէն Քորտոպա - 180 քմ.
- Հինգշաբթի, 25 Սեպտեմբեր (18րդ հանգրուան). Լաս Ռոպասէն Լաս Ռոպաս - 150 քմ.
- Ուրբաթ, 26 Սեպտեմբեր (19րդ հանգրուան). Ալքոպենտասէն Քոլատո Վիլալպա - 166 քմ.
- Շաբաթ, 27 Սեպտեմբեր (20րդ հանգրուան). Էլ Էսթրիպիլէն Ալթո Տր Ապանթոս (ժամացոյցի դէմ անհատական մրցում) - 12 քմ.
- Կիրակի, 28 Սեպտեմբեր (21րդ հանգրուան). Մատրիտէն Մատրիտ - 130 քմ.


● ՀԵԾԵԼԱՐՇԱԻ միջազգային ֆետերասիոնը շաբաթակալիքին հրապարակեց հեծելանորդներու աշխարհի ընդհանուր դասաւորումը, ուր առաջին տասը դիրքերը կը գրաւեն հետեւեալները:

1.- Փաուլո Պեթթինի (Իտալիա)	455
2.- Էրիք Յապլլ (Գերմանիա)	1973
3.- Ճիլպերթ Սիմոնի (Իտալիա)	1955
4.- Տաիտ Ռապելին (Իտալիա)	1771
5.- Ալեանտրո Փեթաքի (Իտալիա)	1764
6.- Իպան Մալո (Սպանիա)	1735
7.- Ալեքսանտր Վինոգրով (Ղազախստան)	1728
8.- Լէն Արմսթրոնկ (Մ. Նահանգներ)	1542
9.- Ֆրանչեսքո Քապակրանտէ (Իտալիա)	1476
10.- Ռոպի Մաքիվըն (Աւստրալիա)	1394

ՊԱՐԹԷԶ ՊԻՏԻ ՄՆԱՅ ԵՆՈՒՆԱՅԹԸՏԻ ՀԵՏ

Ֆրանսայի ֆուտբոլի ազգային խումբին բերդապահը՝ Յապիէն Պարթեզ, երեկ ըսաւ, թէ պիտի մնայ Մասնիէտըր Եուսթրտի հետ, հակառակ անոր որ մարկիշ Ալեքս Ֆերկըսընի կողմէ նկատի կ'առնուի իբրեւ միայն երրորդ բերդապահ: Խումբին հիմնական բերդապահն է ամերիկացի Թիմ Հաուրըտ, իսկ երկրորդ բերդապահը՝ Ռոյ Քէրլը (Հիւսիսային Իրլանտա):

ԵՆՈՒ. ԷՍ. ՕՓԸՆԻ ԵՐԷԿՈՒԱՆ ՄԻԱԿ ՅԱՂԹԱԿԱՆԸ՝ ԱՆՁՐԵԻԸ...




Ենու. Էս. Օփընի մրցաշարքին, երեկ տիրակաճ ցերեկայութիւն մը դարձաւ տեղացող անձրեւը, որ խանգարեց բոլոր մրցումներուն յայտագիրը:

ՄՈՆՏԻՍՄԱԼ 2006

ՀԱՐԱՄԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՉՏՈՒՄԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՍԿՍԻՆ ՇԱՐԱԹՎԵՐՁԻՆ

Շաբաթ - վերջին կը սկսին 2006ի Մոնտիսմալի Հարամալիի Ամերիկայի պտուճի մրցումները, որոնց իրենց մասնակցութիւնը կը բերեն տասը խումբեր՝ Փերու, Փարակուէյ, Բոլիւմպիա, Պրայիլ, Էքուատոր, Վենեսուէլա, Ռուրուիլեյ, Պոլիվիա, Արժանթին եւ Չիլի:



Բլեպըրսը

Աշխարհի ախոյեան Պրայիլ, պտուճի իր առաջին մրցումը պիտի կատարէ յառաջիկայ Սեպտեմբեր 7ին, Պարանալիայի մէջ հիւրը ըլլալով Քոլումբիոյ, իսկ երեք օր ետք Մասնիշ մէջ պիտի հիւրընկալէ Էքուատորը: Արժանթին իր առաջին մրցումը պիտի կատարէ իր դաշտին վրայ, հիւրընկալելով Չիլի, իսկ երեք օր ետք Քարաքասի մէջ հիւրը պիտի ըլլայ Վենեսուէլայի:

Պրայիլի ֆուտբոլի ազգային խումբին մարկիշ Քարլոս Ալպերթո Փարնալ, այդ երկու մրցումներուն համար իր կապիտանի միացուց Էլասոն, որ պիտի փոխարինէ վիրաւոր Բլեպըրսը: Միջամաքամասային ֆուտբոլի մրցաշարքին (Թուրքիոյ դէմ) կարմիր քարտ առաջած Ռոնալտինիօ, կախակալուած ըլլալով պիտի չկարենայ իր մասնակցութիւնը բերել Քոլումբիոյ դէմ տեղի ունենալիք մրցումին:

Արժանթինի մարկիշ Մարսելո Պիելսա, որ իր կապիտանն էր առաւ իր բոլոր հիմնական մարկիկները, վիրաւոր մարկիշ չունի: Չիլի սակայն ունի երեք բացականեր (վիրաւոր), որոնց կարգին խմբապետ՝ Մարսելո Սալաս:

Ստորեւ՝ Պրայիլի եւ Արժանթինի կապիտանները:

● ՊՐԻՉԻԼ ԲԵՐԳԱՊԱՆՆԵՐ.- Տիտա (Ա. Սէ. Միլան) եւ Մարքոս (Փալմէրիա):



Էլասո (աջից)

ՅԵՏԱՊԱՊԱՆՆԵՐ.- Քաֆու (Ա. Սէ. Միլան), Պելլեթի (Վիարէլ), Ռոպերթո Քարլոս (Ռեալ Մատրիտ), ժունիոր (Փարմա), Լուչիո (Պայեր Լեւերքուզըն), Ռոքէ ժունիոր (Ա. Սէ. Միլան), ժուան (Պայեր Լեւերքուզըն) եւ Էսմիլիոս (Լոն):

ՄԻՋՆԱՊԱՆՆԵՐ.- Էմերսո (Ա. Էս. Ռոմա), Ժիլպերթո Սիլվա (Արսենալ), Էլասո (Սանթոս), Ռոնալտինիօ (Պարսելոնա), Չէ Ռոպերթո (Պայեր Միլանի եւ Քաքա (Ա. Սէ. Միլան):


ՅԱՆՁՆԱՊԱՆՆԵՐ.- Ռոնալտո (Ռեալ Մատրիտ) եւ Ռիվալտո (Ա. Սէ. Միլան):

● ԱՐՃԱՆԹԻՆ ԲԵՐԳԱՊԱՆՆԵՐ.- Փալո Քալաքո (Սելթա Վիլո) եւ Լէնարտո Ֆրանթո (Մայորքա):

ՅԵՏԱՊԱՊԱՆՆԵՐ.- Ռոպերթո Ալալ (Վալենսիա), Ռոլֆեր Սամուէլ (Ա. Էս. Ռոմա), Տիեկո Փլատենթէ (Պայեր Լեւերքուզըն), Տէնի (Քրուչ, Մեքսիքա), Ֆարնանտո Քուրթիկա (Սիտրենիկ Լիպոն), Կապիլի Հայնցէ (Փարիս Սէն ժերմէն) եւ Նելսոն Վիվա (Ռիվըր Փլէյթ):

ՄԻՋՆԱՊԱՆՆԵՐ.- Խուան Սեպաթիան Վերոն (Չելսի), Խաիէ Զանթերթի (Ա. Սէ. Միլան), Փալո Այմար (Վալենսիա), Անտրէս Տալեսանտրո (Վոլֆսպորկ), Քրիսթիան Կոնկալիս (Վալենսիա), Մաթիաս Ալմէյտա (Ա. Սէ. Միլան), Էսթեպան Քամպիասո (Ռեալ Մատրիտ) եւ Լուիս Կոնկալիս (Ռիվըր Փլէյթ):

ՅԱՆՁՆԱՊԱՆՆԵՐ.- Խաիէ Սալիոլա (Պարսելոնա), Հենան Քրեսիօ (Չելսի), Սեպար Տելկասո (Քրուչ), Քլաուսիօ Լուիս (Լաչո Ռոմա) եւ Տիեկո Միլիթո (Ռասինկ, Արժանթին):



Սալաս

ՕՈՒԸՆ ՊԱՏՐԱՍՏ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ԼԻՎԸՐՓՈՒԼԻ ՀԵՏ ԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Անգլիոյ ֆուտբոլի ազգային խումբին միջազգային յայտագիրը Օուրըն երեկ յայտնեց, թէ պատրաստ է իր ակումբին՝ Լիվըրփուլի հետ իր պայմանագրութիւնը երկարաձգելու: յայտն ապէս գոհ մնալով իր խմբակիցներէն, համակիրներէն եւ վստահաբար ֆրանսացի իր մարկիշէն՝ ժերար Հուլիէն:



Մայքըլ Օուրըն

23 տարեկան Օուրընի պայմանագրութեան արտադրական արժեքն է 22 միլիոն:

**ՍԵՆՏԱԿԱՆ ԱՐԱՐԻՈՅ
ԳԱՅԱԺԱՌԱՆԳ ԻՇԽԱՆԻՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ
ՄՈՍԿՈՒԱ**




ՄՈՍԿՈՒԱ, 2 (ԱՅՓ)։- ՍենտակաՆ Արաբիոյ գահաժառանգ իշխան Ապտալլա, որ արդէն իսկ անուղղակի կերպով կ'իշխէ, պատմական այցելութիւնն ու կատարեց Մոսկուա, ուր տեսակցութիւն ունեցաւ նախագահ Վլադիմիր Փութինի հետ։

Կրեմլինի մէջ բանակցութիւններուն սկսելէ առաջ, Փութին ըսաւ, որ Ռուսիա մասնաւոր ուշադրութիւն ու կարեւորութիւն կու տայ Ապտալլա իշխանին այցելութեան, որովհետեւ Մոսկուայի համար ՍենտակաՆ Արաբիա կը նկատուի իսլամական կարեւորագոյն պետութիւններէն մէկը։ Փութին աւելցուց, որ երկու երկիրները միացնող շատ մը կապեր կան, որովհետեւ անոնք կը ներկայացնեն Ռիատի եւ Մոսկուայի շահերը։

Ապտալլա իշխանը իր կարգին ըսաւ, որ Ռուսիա կարեւոր ու իրաւաստուկ տեղ կը գրաւէ սենտակաՆներուն սիրտերուն մէջ, որովհետեւ անիկա առաջին պետութիւնն էր, որ ճանաչում տուած էր ՍենտակաՆ Արաբիոյ։ Ապտալլա սենտակաՆի ամէնէն բարձրաստիճան անձնատրութիւնն է, որ 1926էն ի վեր Ռուսիա կ'այցելէ։ Ռիատ - Մոսկուա կապերը միշտ ալ վերիվայրումներ եւ լարուածութեան հանգրուաններ ունեցած են։

**25 ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ ԱՌԱՋԻՆ
ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ՝
ՅՈՐԴԱՆԱՆԻ ԹԱԳԱՌՈՐԸ
ԹԵՂԵՆԻ ՄԷՋ**



ԹԵՂԵՆ, 2 (ԱՅՓ)։- Իրանի նախագահ Մոհամէտ Խաթեմի Երեքշաբթի օր ընդունեց այցելութիւնը Յորդանանի Ապտալլա Բ. թագաւորին, որ 25 տարուան մէջ յորդանանցի առաջին գահակալն է, որ Իրան կ'այցելէ։ Ապտալլայի կ'ընկերակցէր բարձրաստիճան պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմեն նախարարներ ու կարգ մը մարպետ մասնագէտներ։

Երկօրեայ պաշտօնական այցելութիւնը մեծ կարեւորութիւն կը ներկայացնէ Իրանի եւ Յորդանանի համար, որոնք կ'ուզեն բարելաւել իրենց կապերը։ Տասնամեակի մը խլուրդէ ետք, Ամման - Թեհրան կապերը վերահաստատուած էին 1991ին։ Կապերը խլուրդէ էին 1980-1988 Իրաք - Իրան պատերազմին, որովհետեւ այդ հանգրուանին, Թեհրան Յորդանանի չիւսելի թագաւորը քննադատած էր ի նպաստ Պաղատի դիրքորոշումը ըլլալուն համար։

Երկօրեայ հանդիպումներուն ընթացքին, Ապտալլա Բ. եւ Խաթեմի պիտի խորհրդակցին շրջանային հարցերու մասին, յատկապէս իրաքեան ու պաղեստինեւիսրայիլեան տագնապները, որոնք կը յուզեն ամբողջ շրջանը։ Ապտալլա թագաւոր հանդիպումներ պիտի ունենայ նաեւ իրանցի այլ պաշտօնատարներու հետ։

ՆԱԺԱՅԻ ՄԷՋ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ...

Շարունակուած Ա. ԷջԸԸ
Վիրաւոր մը ունեցան, երբ պիտուրներ փոխադրող փոխադրակառք մը բախեցաւ ճամբուն վրայ գետեղծած ակահի մը։ Ամերիկացի բանբեր մը հաստատեց յորը։
● ԵԳԻՊՏՈՍ կոչ ուղղեց Իրաքի մէջ գործող «բոլոր ուժերուն» ապահովութիւնը երաշխաւորելու եւ կարգն ու կանոնը վերահաստատելու երկիրին մէջ։
● ԻՐԱՆԻ արտաքին գործոց նախարարութիւնը ողջունեց Իրաքի կառավարութեան կապուածութիւնը, դիտել տալով, որ անիկա ղեկի յառաջ քայլ մը կը նկատուի իշխանութիւնը իրաքցիներուն յանձնելու ճամբուն վրայ։

ՔԱՌԱՄԵԱՅ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԶԻՆԱԴՈՒԼԻՆ ՎԵՐՋ ՏԱԼՈՎ

**ՔԱԿ ՊԻՏԻ ՎԵՐՍԿՍԻ՝ ԸԱԿԱԹՈՒՐԸ
ԻՐ ՊԱՅՔԱՐԻՆ**

Թուրքիոյ մէջ քրտական պիւնեալ գլխաւոր շարժումը՝ Քիրտիստանի Աշխատաւորական կուսակցութիւնը, որ Երկուշաբթի օր վերջ տուած էր չորս տարուան միակողմանի պիւնադուլին, չի ծրագրեր անմիջապէս յարձակումներու ձեռնարկելու։ Անգարայի կառավարութեան դէմ, յայտնեց շարժումին բարձրաստիճան պաշտօնատարներէն մէկը։

Մուսթաֆա Քարասու ըսաւ, որ յառաջիկայ երեք ամիսները պայքարի գործընթաց մը պիտի ըլլան ՔԱԿի համար, որ պիտի փորձէ Անգարայի հետ երկկողմանի պիւնադուլ մը ապահովել։ Քարասու շեշտեց, որ ՔԱԿի համար միակողմանի պիւնադուլի ջնջումը չի նշանակեր, թէ պատերազմը բացուած կը յայտարարուի։ Քարասու աւելցուց, որ հիմնական քայլը պիտի ըլլայ ժողովրդավարական պայքարի մը ճամբով հասնիլ երկկողմանի պիւնադուլին։ Ան ըսաւ սակայն, որ ՔԱԿ խստի պիտի հակադարձէ, եթէ թրքական բանակին կողմէ յարձակումի ենթարկուի։

ՔԱԿ, որ արգիլուած շարժում մըն է Թուրքիոյ մէջ, ներկայիս կը գործէ ՀՍԷՔ անուան տակ։ Երկուշաբթի օր հրապարակուած պաշտօնական յայտարարութեամբ մը, ՔԱԿ կը յայտնէր, թէ այս հանգրուանին, կարելի չէ հաստատ պահել միակողմանի պիւնադուլը։ Յայտարարութիւնը անուղղակի կերպով մարտահրաւէր մը կ'ուղղէր Անգարայի՝ կամ պատերազմ յայտարարելու, կամ ալ՝ երկկողմանի պիւնադուլի մը մասին բանակցութիւններ կատարելու։

Անգարա շուտով պատասխանեց ՔԱԿի յայտարարութեան՝ մերժելով ընդառաջել անոր պահանջներուն։ Արտաքին գործոց նախարար Ապտալլա Կիլ ըսաւ, որ կառավարութիւնը չ'ընդունիր յատկապէս ՔԱԿի բոլոր անդամներուն ընդհանուր ներում շնորհելու պայմանը։ Կիլ աւելցուց, որ ՔԱԿ պիւնադուլի վերջ տուած է, որովհետեւ տագնապահար է եւ չի գիտեր, թէ ի՞նչ պետք է ընէ։

Միւս կողմէ, Եւրոպական Միութիւնը ցաւ յայտնեց, որ ՔԱԿ վերջ տուած է քառամեայ պիւնադուլին։ Բարձրաստիճան պաշտօնատար մը դիտել տուաւ, որ հիմա պետք է սպասել եւ տեսնել, թէ ինչպիսի՞ արդիւնք պիտի ունենայ ՔԱԿի որոշումը։

(ԱՅՓ)

**ՇԱԱԹ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ
ՀՆԴԿԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԱՐԿԸ**

ՆԻԻ ՏԵԼԻ, 2 (ԱՅՓ)։- Պաղեստինեան իշխանութեան արտաքին գործոց նախարար Նապիլ Շաաթ քննադատեց Հնդկաստանի այն առաջարկը, ըստ որուն՝ ակնի սերտ գործակցութիւն մը անհրաժեշտ է Հնդկաստանի, Իսրայիլի եւ Միացեալ Նահանգներու միջեւ՝ ահաբեկչութեան դէմ պայքարելու համար։

Շաաթ, որ Հնդկաստան կ'այցելէ, «Հինտու» օրաթերթին կողմէ հրապարակուած հարցազրոյցի մը մէջ ըսաւ, որ Հնդկաստան պետք չունի Իսրայիլը իբրեւ միջնորդ ունենալու։ Միացեալ Նահանգներու հետ ակնի սերտ կապերու համար։ Շաաթ ըսաւ, որ յարմար չի նկատեր Հնդկաստան - Իսրայիլ - Միացեալ Նահանգներ առանցքի մը կազմութիւնը ահաբեկչութեան դէմ։

Եռեակ առանցքին առաջարկը ներկայացուած էր Հնդկաստանի ազգային անվտանգութեան հարցերու խորհրդատու Պրաժէշ Միշրայի կողմէ, երբ այս վերջինը Միացեալ Նահանգներ այցելած էր Մայիսին։ Միշրա օրին ըսած էր, որ այսպիսի ճակատի մը կազմութիւնը պիտի ունենայ քաղաքական կամք մը բարոյական իշխանութիւնը տալու ինչպիսի որոշումներ ահաբեկչական գործունէութեան դէմ։

Շաաթ դիտել տուաւ, որ մաս կազմելով այսպիսի ճակատի մը Հնդկաստան ինքնաբերաբար հակապաղեստինեան դիմագիծ պիտի ստանայ, որովհետեւ Իսրայիլ ահաբեկչութիւն կը նկատէ պաղեստինեան ընդդիմութիւնը գրաման դէմ։

**ԻՍՐԱՅԵԼ ԴԱՐՉԵԱԼ
ԿԸ ՄՊԱՌՆԱՅ...**

Շարունակուած Ա. ԷջԸԸ
**ՊԱՂԵՍՏԻՆԵՐ ԿՈՉ ԿՈՒՂՂԵՆ
ԱՐԱՅԱՌԵՒ ԵՒ ՊՊԱՍԻ՝
ՎԵՐՋ ՏԱԼՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ**

Պաղեստինցի ակնաւոր անձնաւորութիւններ կոչ ուղղեցին Արաֆաթի եւ Ապպալի վերջ տալու իշխանութեան պայքարին, անոր փոխարէն իրենց ճիգերը կեդրոնացնելով Իսրայիլի դէմ պայքարին։

Ալեյի քան երկու հարիւր քաղաքական անձնաւորութիւններ, մտաւորականներ եւ ուրիշներ ստորագրած են աղերսագիր մը ուղղուած երկու ղեկավարներուն, որոնցմէ կը պահանջեն լուծել տարակարծութիւնները, որոնք տագնապներ կը ստեղծեն պաղեստինեան հաստատութիւններուն մէջ։ Աղերսագիրը ստորագրողներուն կարգին են Եասէր Ապտ Ռապպո եւ Հասնա Աշրաֆի։

Արաֆաթը եւ Ապպալը հաշտեցնելու բոլոր միջնորդութիւններն ու ճիգերը ցարդ ապարդիւն մնացած են։

Միւս կողմէ, ապահովութեան հարցերու նախարար Մոհամէտ Տահլան յոռետեսութեամբ խօսեցաւ 2005ին պաղեստինեան պետութիւն մը հաստատելու հաւանականութեան մասին։ Տահլան ըսաւ, որ այս պայմաններուն տակ, 2005ը շատ մօտ էր թուի։ Ան շեշտեց սակայն որ ուշ կամ կանուխ պաղեստինեան պետութիւնը պիտի հոչակուի։

● ՌՈՒՄԻՈՅ արտաքին գործոց փոխ նախարար Ֆետոքով ըսաւ, որ Իսրայիլ եւ պաղեստինցիները արտաքին օժանդակութեան կը կարօտին, լուծելու համար իրենց տագնապը։ Ֆետոքով շեշտեց, որ Իսրայիլ եւ պաղեստինցիները կարողութիւնը չունին լուծելու տագնապը։

**ՇՐԵՕՏԵՐ ՎԵՐԱՆՈՐՈՎԵՅ
ԻՐ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝
ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ
ԹՈՒՐՔԻՈՅ ԾԻԳԵՐՈՒՆ**



ՊԵՐԼԻՆ, 2 (ԱՅՓ)։- Գերմանիոյ վարչապետ Կերիարտ Շրեօտը վերանորոգեց իր Կօրակցութիւնը Եւրոպական Միութեան անդամակցելու Թուրքիոյ ճիգերուն։ Շրեօտը, որ կը խօսէր Թուրքիոյ վարչապետ Ռեճէփ Էրտողանի հետ հանդիպումի մը աւարտին, ըսաւ, որ Թուրքիոյ մէջ վերջերս կիրարկուող բարեկարգումները չափապէս կարեւոր են եւ պիտի օժանդակեն անդամակցութեան փափաքին։ Ան աւելցուց, որ Թուրքիոյ յոյսերը պետք է ճնշել, որովհետեւ անոր անդամակցութիւնը կը նպաստէ Եւրոպայի եւ Գերմանիոյ շահերուն։

Շրեօտը քննադատեց Գերմանիոյ պահպանողական կուսակցութիւնները, որոնք կը մերժեն Անգարայի անդամակցութեան դիմումը Եւրոպական Միութեան։

**ՓԻՈՆԿԵԱՆԿ ՀԱՄԱՁԱՅՆ՝
ԿՈՐԻՉԱՅԻՆ ՏԱԳՆԱՊԸ
ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՎ
ԼՈՒԾԵԼՈՒ**

ՍԵՒՆ, 2 (ԱՅՓ)։- Հիւսիսային Քորէա պատրաստակամութիւն յայտնեց կորիպային տագնապը երկխօսութեան ճամբով լուծելու հրաժարելով բանակցութիւնները մերժող իր կեցումով։

Փիոնկեանկի պաշտօնական լրատու գործակալութիւնը Միացեալ Նահանգները ամբաստանեց անցեալ շաբթուան բազմակողմանի բանակցութիւններուն յառաջիկայ արգելափակելու յանցանքով։ Լրատու աղբիւրը ըսաւ սակայն որ Հիւսիսային Քորէա կը մերժէ նոր բանակցութիւններ։ Գործակալութիւնը աւելցուց, որ Փիոնկեանկի հաստատ կը մնայ Ուաշինկթօնի հետ տագնապը խաղաղ միջոցներով ու երկխօսութեամբ լուծելու ընտրանքին վրայ։

Պէյճինկի ետօրեայ բանակցութիւններուն մասնակցած էին երկու Քորէաները, Չինաստան, Ճապոն, Ռուսիա եւ Միացեալ Նահանգներ։ Բանակցութիւնները աւարտած էին առանց շոշափելի արդիւնքներու։

Միւս կողմէ, Չինաստան յայտնեց, որ բանակցութիւններու յառաջիկայ հանգրուանը պետք է կեդրոնանայ Փիոնկեանկի հանդէպ Ուաշինկթօնի ծխտակաճիւղի քաղաքականութիւնը ջնջելու վրայ։

**ԹԵՂԵՆ ԼՐՋՕՐԷՆ
ԱՐՇԱԻԻ ԶԵՌՆԱՐԿԱԾ Է
«ՔԱՅԻՏԱ»Ի ԴԷՄ**

Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ Խարապի յայտնեց, որ իսլամական հանրապետութիւնը լրջօրէն արշաւի մը ձեռնարկած է «Քայիտա»ի ահաբեկչական շարժումին եւ անոր անդամներուն դէմ։ Խարապի հերքեց ամերիկեան այն ամբաստանութիւնները, ըստ որոնց Թեհրան կ'արտօնէ, որ պիւնեալներ իր սահմաններէն Իրաք անցնին։

Խարապի, որ կը խօսէր Քուէյթի վարչապետ շէյխ Սապահ Ահմէտ Սապահի հետ ունեցած տեսակցութեան աւարտին, ընդգծեց թէ Իրան «Քայիտա»ի տասնեակ մը հետեւորդներ ձերբակալած ու իրենց երկիրներուն արտախանձած է։ Ան աւելցուց, որ այլ ձերբակալուածներ տակալին Իրան կը գտնուին, որովհետեւ ամբաստանուած են Իրանի ապահովութիւնը վտանգելու եւ խախտելու յանցանքով։ Խարապի ըսաւ, որ ձերբակալուածները պիտի դատուին իրանեան ատեններու կողմէ։ Յիշեալ ձերբակալուածներուն գոմով արտախանձումի որոշում չէ տրուած տակալին։

Դիւանագիտական եւ արաբական մամլոյ աղբիւրներ կը հաղորդեն, որ Իրանի մէջ ձերբակալուածներուն կարգին են Ուսամա Պըն Լադէնի տղան՝ Սաստ եւ «Քայիտա»ի բարձրաստիճան այլ պաշտօնատարներ։

(ԱՅՓ)